Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. ապրիլի 10-ի N 42-L որոշման

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

2025-2028

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ԿԸՀ - Կենտրոնական ընտրական հանձնաժողով

ԸԸՀ - Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով

ՏԸՀ - Տեղամասային ընտրական հանձնաժողով

ԸՀՄՀ- Ընտրական համակարգերի միջազգային հաստատություն (IFES)

ՌՊԱԽ - Ռազմավարական պլանավորման աշխատանքային խումբ

ՄՌ - Մարդկային ռեսուրսներ

ՀԿ - Հասարակական կազմակերպություն

ՔՀԿ - Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ

ՏՏ - Տեղեկատվական տեխնոլոգիաներ

ՏՎ – Տեղեկատվության վերլուծություն

ՎՎԾ - Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն

ՏՀՏ - Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ

ՋԼՄ – Զանգվածային լրատվության միջոց

ՀՈՒԱ – Հաշմանդամություն ունեցող անձինք

ԸՕ – Ընտրական օրենսգիրք

ԱԺ – Ազգային ժողով

ԵԱՀԿ – Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԺՀՄԻԳ – Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

ԲՈՒՀ – Բարձրագույն ուսումնական հաստատություն

ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԱԶԾ – Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր

ԸՆՍ – Ընտրողների նույնականացման/գրանցման տեխնիկական սարքավորում

ԱԱԾ – Ազգային անվտանգության ծառայություն

ՏԱԿՀ – Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ

ԱՆԱԹ – Ապատեղեկատվության ներքին արձագանքման թիմ

ԱՊՀ – Անկախ պետությունների համագործակցություն

MRZ – Machine Readable Zone, Մեքենաընթեռնելի գոտի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ.....5

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանադրական մանդատը..... 5

Ընտրական գործընթացների իրավական կարգավորումների և ընտրական միջավայրի փոփոխության համառոտ ակնարկ 6

Ռազմավարական պլանի մշակման մասնակցային գործընթացը 7

ԿԸՀ առաքելությունը, տեսլականը, առաջնորդող սկզբունքները 10

ԿԸՀ արժեքները և առաջնորդող սկզբունքները 12

Ռազմավարական պլանի իրագործումը, մշտադիտարկումը, գնահատումը և վերանայումը 12

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ.....14

Ռազմավարական հենասյուներ 14

1. Համընդգրկուն ընտրություններ.....15

1.1 Ընտրողների մասնակցության խթանում 15

1.2 Գենդերային հավասարություն.....16

1.3 Երիտասարդության ներգրավում.....16

1.4 Հաշմանդամություն ունեցող անձինք.....17

1.5 Ազգային փոքրամասնություններ.....18

2. Ընտրական վարչարարության զարգացում..... 18

2.1 ԿԸՀ և աշխատակազմ.....18

2.2 Նյութատեխնիկական և ներկայացուցչական ապահովվածություն, կարողությունների զարգացում.....20

2.3 ԸԸՀ կազմավորման վերանայում / բարելավում..... 21

2.4 ՏԸՀ կարողությունների բարելավում 22

2.5 ԿԸՀ պաշտոնական կայքի զարգացում 24

Նոր ճարտարապետության նախագիծ, որը թույլ կտա առանձնացել համակարգերն ըստ դոմեյնների 24

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայք՝ **https://elections.am**..... 24

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում Հաշվետվական-վերլուծական համակարգի ներդրում՝ «Ընտրությունները թվերով կամ թվային ընտրություններ»՝ https://elections.am 25

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող համակարգերի ամբողջականացում 25

3. Ուսուցում և իրազեկում 26
3. 1 Ուսումնական ստորաբաժանում 26
3. 2 Մարզային ուսումնական կենտրոններ 27
3.3 Էլեկտրոնային ուսուցման և ատեստավորման համակարգ 28
3. 4 Ծանուցումների էլեկտրոնային համակարգ 30
3. 5 Իրազեկում 31
3.6 «Ժողովրդավարություն և ընտրություններ» կրթական ծրագիր 32
4. Քվեարկության կատարելագործում 33
4. 1 Նոր նույնականացման քարտերի ներդրման գործընթաց 33
4. 2 Տեխնիկական սարքավորումների վերազինում 34
4.3 Փորձարարական ծրագրեր 36
4. 4 Մատչելիության բարելավում 37
4.5 «Կանաչ ընտրություններ» 37
5. Ընտրական անվտանգություն 39
5. 1 Կիբեռանվտանգություն 39
Առաջնորդություն և կազմակերպչական համատեքստ 43
Ակտիվների կառավարում 43
Հասանելիության կառավարում 44
Կիբեռանվտանգային մշակույթ 45
5.2 Ապատեղեկատվության դեմ պայքար 47
6. Արտաքին համագործակցություն 49
6. 1 Միջգերատեսչական համագործակցություն 49
6. 2 Միջազգային համագործակցություն և դոնորների համակարգում 52
6. 4 Քաղաքացիական հասարակության ներգրավում 54
6. 5 Համագործակցություն ՋԼՄ-ների հետ 55

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանադրական մանդատը

Որպես անկախ պետական մարմին՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները և վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:

Իր լիազորությունների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները, սահմանում մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և որակավորում շնորհելու կարգը, վերահսկողություն է իրականացնում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) միատեսակ կիրառման նկատմամբ, լսում է ընտրական հանձնաժողովների և պետական մարմինների հաղորդումները ընտրությունների նախապատրաստման ու անցկացման մասին, մշակում և հրապարակում է ուսումնական նյութեր՝ ընտրական հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար, իրականացնում է ընտրությունների վերաբերյալ հանրային իրազեկում, ինչպես նաև՝ Ընտրական օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

ԿԸՀ կազմը և կազմավորման կարգը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված է յոթ անդամից՝ ներառյալ ԿԸՀ նախագահը, ովքեր ընտրվում են Ազգային ժողովի պատ-գամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով՝ 6 տարի ժամկետով:

Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երեքից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի և հանձնաժողովի քարտուղարի թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը և քարտուղարն ընտրվում են բաց քվեարկությամբ:

Նշված ընտրակարգով Կենտրոնական ընտրական հանձնաժողով ընտրվել է 2016 թվականի հոկտեմբերի 6-ին և 2022 թվականի հոկտեմբերի 7-ին: Գործող ԿԸՀ-ն իր լիազորություններն ստանձնել է 2022 թվականի հոկտեմբերի 12-ին:

Ընտրական գործընթացների իրավական կարգավորումների և ընտրական միջավայրի փոփոխության համառոտ ակնարկ

2020-2021 թվականների օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ ՏԻՄ ընտրակարգը գրեթե ամբողջությամբ և ԱԺ ընտրակարգն ամբողջությամբ անցում են կատարել պարզ համամասնական ընտրակարգին: 2021 թվականից համամասնական ընտրակարգում ուժի մեջ է մտել սեռերի ներկայացվածության նոր քվոտայի պահանջ՝ յուրաքանչյուր սեռի թեկնածուների քանակը նվազագույնը 30 տոկոսից պակաս չլինելու մասին: 2020 թվականին «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ընդունված փոփոխություններով պարզեցվեց կուսակցություններ հիմնադրելու գործընթացը, էապես ավելացվեց պետական ֆինանսավորումը, սահմանվեցին ֆինանսական թափանցիկության և հաշվետվողականության նոր պահանջներ:

Նախորդող հինգ տարիներին խորհրդարանական և ՏԻՄ ընտրությունները Հայաստանի հանրության, տեղական և միջազգային դիտորդների կողմից գնահատվել են որպես ազատ, արդար, թափանցիկ և մրցակցային:

Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից անցկացված հանրային կարծիքի հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ԿԸՀ-ի վարկանիշը եղել է բավականին բարձր՝ ի տարբերություն մի շարք այլ պետական հաստատությունների և գերատեսչությունների:



Վերջին հինգ տարիների ընթացքում Հայաստանը բարելավել է իր դիրքերը միջազգայնորեն ճանաչված մի շարք վարկանիշային ցուցակներում: Այսպես՝ ըստ Economist Intelligence Unit-ի Հայաստանի 2018-2022թթ. ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ նախորդ տարիների համեմատ արձանագրվել է զգալի առաջընթաց: Ըստ այդմ՝ 2018թ.-ից սկսած կայուն աճ է արձանագրվել «Ընտրական գործընթաց և բազմակարծություն» կատեգորիայում:

Համաձայն «Freedom House»-ի համացանցային ազատության ցուցակի՝ Հայաստանը 70 երկրների շարքում դասակարգված է որպես «ազատ» երկիր՝ 74 միավորով (2022 թ. Հայաստանին տրվել էր 71 միավոր 70 երկրների շարքում): «Ազատ» երկրների ենթակարգում Հայաստանը հայտնվել է 2018 թվականից ի վեր:

«Reporters without Borders»-ի մամուլի ազատության 2024թ. վարկանիշային աղյուսակում, որն ամփոփում է 2023 թ., Հայաստանը 180 երկրների շարքում 71.6 միավորով զբաղեցնում է 43-րդ հորիզոնականը, նախորդ տարվա համեմատ դիրքերը բարելավելով 5 հորիզոնականով: Այս ցուցանիշով Հայաստանն առաջատարն է տարածաշրջանում:

«Transparency International»-ի «Կոռուպցիայի ընկալման ցուցիչ 2022»-ի համաձայն Հայաստանը 180 երկրների շարքում զբաղեցնում է 63-րդ տեղը (46 միավոր)՝ նախորդ տարվա զեկույցի համեմատ դիրքերը զիջելով 5 հորիզոնականով (49 միավոր): Այս ցուցանիշով Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում Հայաստանը երկրորդն է՝ Վրաստանից հետո:

Ռազմավարական պլանի մշակման մասնակցային գործընթացը

Ընտրական օրենսգրքի բարեփոխման և ընտրական վարչարարության նկատմամբ ամբողջական վստահության ամրապնդմանն ուղղված աշխատանքներին նպաստելու համար ԿԸՀ-ն խնդիրներին արձագանքողի դիրքից անցում է կատարում նախաձեռնողի դերակատարմանը՝ հնարավորություն տալով շահագրգիռ բոլոր կողմերին ներգրավվել ընտրական գործընթացների բարելավմանը:

ԿԸՀ-ի քառամյա ռազմավարության մշակման շրջանակներում ստեղծվել է ԿԸՀ հինգ ներկայացուցիչներից կազմված ռազմավարական ծրագրի մշակմանն ուղղված աշխատանքային խումբ (ԿԸՀ չորս անդամներ և մեկ ներկայացուցիչ ԿԸՀ աշխատակազմից): Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) հայաստանյան գրասենյակը համակողմանի աջակցել է աշխատանքային խմբին՝ ռազմավարական պլանի մշակման ողջ ընթացքում:

Աշխատանքային խումբը մշակել է ռազմավարական պլանի մշակման գործողությունների մանրամասն ծրագիր և սահմանել է այդ գործողությունների

կատարման ժամանակացույցը: Ուսումնասիրել է ընտրական համակարգի գործունեությունը, Հայաստանում ընտրություններին վերաբերող տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից պատրաստված զեկույցները, ինչպես նաև՝ իրականացված հանրային կարծիքի հարցումները:

Ռազմավարական պլանի մշակումն իրականացվել է հետևյալ փուլերով.

1. 2022 թվականի նոյեմբերին Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) հայաստանյան գրասենյակի աջակցությամբ՝ 2-օրյա արտագնա աշխատաժողով է կազմակերպվել ԿԸՀ անդամների և աշխատակազմի հետ: Աշխատաժողովի արդյունքում հնարավոր է դարձել վերլուծել ընդհանուր ընտրական վարչակազմի և յուրաքանչյուր առանձին կառուցվածքային ստորաբաժանման կատարողականությունը, ինչպես նաև ընդգծել թույլ և ուժեղ կողմերը, զարգացման հնարավորություններն ու պոտենցիալ մարտահրավերները: Այս փուլում նախանշվել են այն առանցքային հարցերը, որոնցով պայմանավորված են ընտրական վարչակազմի առաջնահերթությունները, խնդիրները, նպատակներն ու թիրախները:

   Աշխատաժողովում բարձրացված հարցերը, դիտարկումներն ու առաջարկությունները ենթարկվել են հետագա ուսումնասիրության և վերլուծության, իսկ արդյունքները ներառվել են ռազմավարական ծրագրում:
2. Ռազմավարական ծրագրի մշակման փուլում խորհրդակցական հանդիպումներ են տեղի ունեցել ընտրական գործընթացների հետ առնչվող շահառուների հետ՝
   - 2023 թվականի հունիսին աշխատանքային խումբը խորհրդակցական հանդիպում է ունեցել տեղական ՀԿ-ների, կուսակցությունների, ՋԼՄ-ների ներկայացուցիչների հետ,
   - 2023 թվականի հոկտեմբերին աշխատանքային խումբը հանդիպումների շարք է ունեցել ընտրական գործընթացներում գործառույթ իրականացող գերատեսչությունների ներկայացուցիչների հետ:
3. 2024 թվականի ապրիլին IFES-ի աջակցությամբ կազմակերպվել է երկօրյա արտագնա աշխատաժողով, որի ընթացքում ԿԸՀ-ին և աշխատակազմին ներկայացվել է ռազմավարական պլանի նախագիծը:

Այս ռազմավարական ծրագիրը մշակելիս ուսումնասիրվել են մի շարք երկրների ընտրական մարմինների ռազմավարական պլաններ և գործողությունների ծրագրեր, կիրառվել է IFES-ի կողմից առաջարկվող մեթոդաբանությունը: Այդ մեթոդաբանությամբ մշակվել են այն քայլերը, որոնք նպատակ ունեն ապահովելու ընտրական համակարգի/մարմինների շարունակական զարգացումը, ընտրողներին, կուսակցություններին և թեկնածուներին՝ ԿԸՀ կողմից տրամադրվող ծառայություններն ու աջակցությունը:

Աշխատանքային խումբը մանրամասն ուսումնասիրել է հանդիպումների ընթացքում հնչած կարծիքները՝ նպատակ ունենալով վերհանել առկա խնդիրները և սահմանել դրանց լուծումները:

Մշակվել է նոր, համապարփակ, երկարաժամկետ ռազմավարական ծրագիր, որը սահմանում է քառամյա ճանապարհային քարտեզ՝ Հայաստանի ընտրական հանձնաժողովների համակարգի և ընտրական գործընթացներում շահագրգիռ մյուս շահառուների համար:

Աշխատանքային խումբը սահմանել է ոլորտային ուղղություններ և պատասխանատուներ: ԿԸՀ աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները ներգրավվել են ռազմավարական պլանի աշխատանքային քննարկումներին՝ ներկայացնելով իրենց ոլորտին վերաբերող առաջարկություններ: Աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացրել է իր պատասխանատու բաժնի նախագիծը, որը քննարկվել է ընդհանուր խմբում և ներառվել ռազմավարական պլանում:

Աշխատանքային խումբը սահմանել է ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի իրականացման պարբերական մշտադիտարկման ժամանակացույց: Մշտադիտարկման արդյունքներով առնվազն տարին մեկ անգամ ԿԸՀ-ն քննելու է ռազմավարական պլանի իրականացման կարգավիճակը, գնահատելու է ոլորտային հաշվետվությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերանայելու է գործողությունների պլանը:

ԿԸՀ առաքելությունը, տեսլականը, առաջնորդող սկզբունքները

ԿԸՀ SWOT վերլուծության աղյուսակ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Թիմային աշխատանք • Ժառանգություն • Փորձառություն • Անկախություն • Կոլեգիալություն • Արագ կողմնորոշվելու հմտություն • Աշխատանքի թափանցիկություն • Միասնականություն • Որոշ կայացած համակարգեր • Իրավիճակային վերլուծության կենտրոն • Աշխատանքային հարգալից մթնոլորտ, ազատ արտահայտվելու հնարավորություն • Համագործակցություն շահառուների հետ • Կամք	• Հաղորդակցության պակաս • Ռեսուրսների սղություն • Կարիերայի վերելքի հնարավորության բացակայություն • Վերապատրաստման պակաս • Առկա ներուժի ոչ ռացիոնալ օգտագործում • Ռազմավարության բացակայություն • Շենքային/կենցաղային պայմաններ • Աշխատակազմի կարգավիճակը / հաստիքացուցակ • Հաշվետվողականություն • Աշխատանքային պարտականությունների բաժանում • Ընդունված կարծրատիպային մտածողություն, այլակարծության չընդունում • Նորարար փոփոխությունների վախ • Միջազգային կազմակերպությունների հետ սահմանափակ համագործակցություն

Հնարավորություններ	Սպառնալիքներ
• Շահառուների դրական վերաբերմունք • Միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համագործակցություն • Միջազգային փորձի փոխանակում • Համագործակցելու պատրաստակամություն • Մասնակցայնություն • Ուսուցում և իրազեկում • Օրենսդրական բարեփոխումներ • Բջջային հավելված / թվայնացում • Արդիականացում • Միջազգային ծրագրային / նյութատեխնիկական աջակցություն • Պետական աջակցություն	• Քաղաքական ուժերի անհանդուրժող վերաբերմունք • Հանրային ընկալում / Հանրային վստահության պակաս • Մեդիա ապատեղեկատվություն / կեղծ լրատվություն • Կիբեռանվտանգություն • Ճգնաժամեր / ֆորսմաժորային իրավիճակներ • Աշխատակազմ ձևավորելու անկախության բացակայություն • Հրապարակված անձնական տվյալների ոչ նպատակային օգտագործում • Օրենսդրական բացեր / թերի օրենսդրական փոփոխություններ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդի իշխանության իրացման ապահովում՝ ազատ, արդար, թափանցիկ, մրցակցային և ժողովրդավարական միջազգային չափանիշներին համապատասխանող ընտրությունների և հանրաքվեների միջոցով:

ՏԵՍԼԱԿԱՆ

Ժողովրդավարական ընտրություններ և հանրաքվեներ, որոնց նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման գործընթացն ընդունվում է հանրության կողմից:

ԿԸՀ արժեքները և առաջնորդող սկզբունքները

Արժեքներ	**Առաջնորդող սկզբունքներ**
Օրենքի գերակայություն	Թիմային աշխատանք
Պատասխանատվություն	Համագործակցություն
Թափանցիկություն	Հաշվետվողականություն
Անաչառություն	Բարեվարքություն
Ներառականություն	Հարգանք
Բազմակարծություն	Նախաձեռնողականություն
Անկախություն	Կոլեգիալություն
Արհեստավարժություն	Կոնսենսուսի հասնելու ձգտում
	Աշխատանքի բաժանում
	Ինստիտուցիոնալ հիշողության պահպանում
	Բարձր որակի ապահովում

Ռազմավարական պլանի իրագործումը, մշտադիտարկումը, գնահատումը և վերանայումը

Ռազմավարական պլանի իրագործման պատասխանատուն ԿԸՀ-ն է, որպես կոլեգիալ մարմին, սակայն ռազմավարական պլանի յուրաքանչյուր ռազմավարական խնդրի համար անհատապես պատասխանատու է ԿԸՀ անդամներից մեկը:

ԿԸՀ անդամը վերահսկողություն է իրականացնում տվյալ ռազմավարական խնդրի համար իրավասու ԿԸՀ համապատասխան ստորաբաժանման նկատմամբ և օժանդակում է տվյալ ստորաբաժանման աշխատանքներին:

ԿԸՀ-ն ռազմավարական պլանի ընդունումից հետո, առաջին երկու տարում երեք ամիսը մեկ պարբերականությամբ գնահատելու է ռազմավարական պլանի իրականացման ընթացքն, իսկ երրորդ տարվանից սկսած՝ վեց ամիսը մեկ պարբերականությամբ: Գնահատումն իրականացվելու է գրավոր՝ յուրաքանչյուր ռազմավարական նպատակին հասնելու համար նախատեսված գործողությունների վերաբերյալ զեկույց ներկայացնելու միջոցով: Ռազմավարական պլանի իրականացման առաջընթացը հավաստվում է նախանշված գործողությունների չափելի արդյունքների քանակական և որակական գնահատմամբ:

Ռազմավարական պլանի իրականացման գնահատման զեկույցները հիմք կարող են հանդիսանալ առանձին ռազմավարական խնդիրների իրականացման համար նախատեսված ժամկետները վերանայելու և/կամ այդ խնդիրները վերասահմանելու համար:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ռազմավարական հենասյուներ

1. Համընդգրկուն ընտրություններ

- 1.1 Ընտրողների մասնակցության աճ
- 1.2 Գենդերային քաղաքականություն
- 1.3 Երիտասարդներ
- 1.4 Ազգային փոքրամասնություններ
- 1.5 ՀՈՒԱ

2. Ընտրական վարչարարության զարգացում

- 2.1 ԿԸՀ կառուցվածք
- 2.2 ԿԸՀ ենթակառուցվածքներ և կարողությունների զարգ.
- 2.3 ԸԸՀ կազմավորման վերանայում / բարելավում
- 2.4 ՏԸՀ կազմավորման բարելավում

3. Ուսուցում և իրազեկում

- 3.1 Ուսումնական ստորաբաժանում
- 3.2 Ուսումնական կենտրոններ
- 3.3 Էլեկտրոնային ուսուցման և ատեստավորման համակարգ
- 3.4 Ծանուցումների էլեկտրոնային համակարգ
- 3.5 Իրազեկում
- 3.6 «Ժողովրդավարություն և ընտրություններ» ծրագիր

4. Քվեարկության կատարելագործում

- 4.1 Նույնականացման քարտերի ներդրման գործընթաց
- 4.2 Տեխնիկական սարքավորումների վերազինում
- 4.3 Փորձարարական ծրագրեր
- 4.4 Մատչելիության բարելավում
- 4.5 Կանաչ ընտրություններ

5. Ընտրական անվտանգություն

- 5.1 Կիբեռանվտանգություն
- 5.2 Կիբեռհիգիենա
- 5.3 Ապատեղեկատվության դեմ պայքար

6. Արտաքին համագործակցություն

- 6.1 Միջգերատեսչական համագործակցություն
- 6.2 Դոնորների համակարգում և միջազգային համագործակցություն
- 6.3 Քաղհասարակության ներգրավում
- 6.4 Համագործակցություն ՁԼՄ-ների հետ

1. Համընդգրկուն ընտրություններ

1.1 Ընտրողների մասնակցության խթանում

Ընտրությունների միջոցով քաղաքացիներն իրացնում են պետական կառավարմանը մասնակցելու իրենց իրավունքը: Ընտրությունները պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններ ձևավորելու կամ պաշտոնատար անձանց լիազորություններ շնորհելու գործընթաց է, որն իրականացվում է ընտրողների քվեարկության միջոցով: Ընտրությունների լեգիտիմությունը Հայաստանում կախված չէ մասնակցության ցուցանիշից, վերջինս, այնուամենայնիվ, էական կարևորություն ունի ժողովրդավարական ընտրությունների համար մի քանի պատճառներով:

Երբ ընտրություններին մասնակցում են տարբեր տեսակետներ ունեցող և սոցիալական տարբեր շերտերի ընտրողներ՝ ընտրված իշխանությունները հանրության ավելի լայն շերտեր են ներկայացնում և ընկալվում առավել ներկայացուցչական:

Քանի որ անմիջականորեն ավելի շատ ընտրողներ են մասնակցում քվեարկությանը, մեծանում է հաշվետվողականության մակարդակը ընտրվողների համար:

Խթանվում է քաղաքացիական պատասխանատվությունը, քանի որ քվեարկությունը ոչ միայն լիազորությունների պատվիրակում է, այլ նաև նախընտրած քաղաքական ուղղության համար պատասխանատվության ստանձնում:

Եվ վերջապես, մասնակցության կայուն բարձր մակարդակը տարիների ընթացքում ավելի ամուր ժողովրդավարական ավանդույթների հիմք է ստեղծում և ապահովում է ժողովրդավարության շարունակականությունը:

Վերոհիշյալ համատեքստում մտահոգիչ է վերջին տարիներին և հատկապես՝ ՏԻՄ ընտրությունների ժամանակ արձանագրված մասնակցության ցածր տոկոսը: Օրինակ՝ 2021 թվականին Գյումրիում ՏԻՄ ընտրությունների ժամանակ մասնակցությունը կազմել էր ընդամենը 24.14 տոկոս, իսկ 2023 թվականին Երևանի ավագանու ընտրություններին մասնակցեցին ընտրողների 28.46 տոկոսը:

Ընտրողների մասնակցությունը խթանելու համար ԿԸՀ գործողությունների ծրագիրը նախատեսում է՝

- Երկարաժամկետ կտրվածքով մասնակցության աճ ապահովող ռազմավարություն մշակելու նպատակով՝ ընտրողների մասնակցության վրա ազդող գործոնների համապարփակ ուսումնասիրություն:
- Ուսումնասիրության արդյունքների հիման վրա թիրախային ծրագրերի մշակում և իրականացում՝ հաշվի առնելով տարածքային, տարիքային և այլ առանձնահատկությունները:

1.2 Գենդերային հավասարություն

ԿԸՀ-ն իր լիազորությունների շրջանակներում պարտավորվում է խթանել գենդերային հավասարությունը և ապահովել կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունն ընտրական գործընթացներին: ԿԸՀ-ն կարևորում է գենդերային հավասարության և կանանց հնարավորություններին և կարողություններին օժանդակելու առաջնահերթությունը ընտրությունների կազմակերպման և կառավարման բոլոր մակարդակներում: Այդ նպատակով ԿԸՀ-ն ձգտում է նվազեցնել կանանց մասնակցության բոլոր բացերը՝ գենդերային հավասարությունը դարձնելով իր ռազմավարության, քաղաքականության և գործողությունների անբաժան բաղադրիչը:

ԿԸՀ գործողությունների ծրագիրը գենդերային քաղաքականության իրականացման համար նպատակ է հետապնդում՝

- բացառել գենդերային խտրականությունը և խթանել գենդերային հավասարությունը ընտրական գործընթացի բոլոր ոլորտներում,
- խթանել կանանց մասնակցությունը ընտրական գործընթացում, ներառյալ՝ որպես թեկնածուներ, ընտրողներ և ընտրական վարչարարության ներկայացուցիչներ:

1.3 Երիտասարդության ներգրավում

Երիտասարդ ընտրողները կազմում են քվեարկելու իրավունք ունեցողների 28 տոկոսը՝ մոտ մեկ երրորդը: 2023 թվականի Երևանի ավագանու ընտրություններին 18-ից 35 տարեկան ընտրողների մասնակցության տոկոսը (23.54%) մոտ 10 կետով ավելի քիչ է եղել քան 50-ից 65 և 65-ից բարձր տարիքային խմբերում գտնվող ընտրողների մասնակցությունը (համապատասխանաբար՝ 32.24% և 33.31%):

Երիտասարդների մասնակցությունը բարեփոխումներն առաջ մղելու լավագույն և ամենաարդյունավետ տարբերակն է: Ընտրություններում երիտասարդների մասնակցությունը խթանում է քաղաքացիական ներգրավվածությունը, սերմանում է ժողովրդավարական գործընթացում մասնակից լինելու արժեքը: Երիտասարդների ներգրավվածությունն այս գործընթացի կարևոր «հիմնաքարն» է, հաշվի առնելով, որ ակտիվ քաղաքացիական ուսուցումն ամենաարդյունավետն է, երբ ուսանողները ոչ միայն կարդում են այդ մասին դասագրքերում, այլև փորձում են դա ցույց տալ իրենց քաղաքացիական ակտիվությամբ: Երիտասարդներին ընտրական գործընթացում ներգրավելու համար անհրաժեշտ է ապահովել այնպիսի միջավայր, որը կխրախուսի նրանց մասնակցել քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացներին: Փորձը ցույց է տալիս, որ երիտասարդ թեկնածուների ներուժի զարգացումն ավելի

արդյունավետ է, եթե այն իրականացվում է շարունակական աջակցության տեսքով, այլ ոչ թե որպես մեկանգամյա միջոցառում, որն իրականացվում է միայն ընտրությունների նախաշեմին: Երիտասարդներն, ովքեր վաղ տարիքից ներգրավված են իրենց համայնքում տեղի ունեցող քաղաքացիական գործընթացներում, ավելի հավանական է, որ կդառնան ակտիվ քաղաքացիներ և ընտրողներ:

ԿԸՀ գործողությունների ծրագիրը երիտասարդների մասնակցությունը խթանելու համար նպատակ է հետապնդում՝

- խթանել երիտասարդների մասնակցությունը ընտրություններում՝ հատուկ ուշադրություն դարձնելով առաջին անգամ ընտրողներին և ընտրական տարիքին մոտեցող երիտասարդներին,
- ընտրական գործընթացներում երիտասարդների մասնակցությունը խթանելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել կրթական ծրագիր, որը կներառի դասախոսությունների, գործնական սեմինարների, գիտա-գործնական հանդիպումների և կլոր սեղանների կազմակերպում՝ ԿԸՀ ներկայացուցիչների ներգրավմամբ:

1.4 Հաշմանդամություն ունեցող անձինք

Հաշմանդամություն ունեցող անձինք (ՀՈՒԱ) կազմում են Հայաստանի ընտրողների մոտ 6 տոկոսը: ՀՈՒԱ մասնակցության միջոցով էապես բարձրանում է ընտրությունների ներառականությունը և ընտրված պաշտոնյաների ներկայացուցչականությունը: Հանրային կյանքի մի շարք ոլորտներում, ինչպիսին, օրինակ, կրթությունն է, ներառականությունը դարձել է պետական քաղաքականության մաս: Ընտրություններում ՀՈՒԱ մասնակցությունը, հատկապես, կարևոր է մարդու առաջնային և քաղաքական իրավունքների իրացման հավասարության տեսանկյունից: ՀՈՒԱ ներգրավումը ընտրական գործընթացներում նպաստում է պետական և տեղական մակարդակներում ներառական քաղաքականության մշակմանը և մատչելի միջավայրի ստեղծմանը, իսկ որպես թեկնածու առաջադրումը, հասարակության մեջ կոտրում է մի շարք կարծրատիպեր և թյուրընկալումներ, որոնք վերաբերում են ՀՈՒԱ հնարավորություններին և պատասխանատվություն ստանձնելու կարողությանը:

ԿԸՀ գործողությունների ծրագիրը ընտրական գործընթացներում ՀՈՒԱ ներգրավման համար հետապնդում է հետևյալ նպատակները՝

- խթանել ՀՈՒԱ մասնակցությունը ընտրություններում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշմանդամության տեսակի առանձնահատկությունները,
- խրախուսել ՀՈՒԱ մասնակցությունը ընտրական գործընթացում որպես թեկնածուներ, վստահված անձինք, դիտորդներ և ընտրական

վարչարարության ներկայացուցիչներ և այլ դերակատարներ:

1.5 Ազգային փոքրամասնություններ

Ազգային փոքրամասնությունները Հայաստանի հասարակության մշակութային և սոցիալական կառուցվածքի կարևոր մասն են հանդիսանում: Լիակատար մասնակցելով ընտրություններին ազգային փոքրամասնություններն իրենց հավաքական նախընտրությունն են բարձրաձայնում և իրենց իշխանությունն են իրականացնում: Ազգային փոքրամասնությունների ներգրավմամբ կարևորություն են ստանում իրենց համայնքներում առկա խնդիրները, իսկ այդ խնդիրների լուծումը հանգեցնում է ավելի ներառական և արդար հասարակություն ունենալուն: Ընտրական գործընթացներում ազգային փոքրամասնությունների ներգրավվածությունը բարձրացնում է տվյալ համայնքների դերը: Հանրային իշխանության մարմինների նկատմամբ ավելի մեծ վստահություն է ձեռք բերվում, երբ դրանց ձևավորմանը մասնակից են դառնում ազգային փոքրամասնությունները:

ԿԸՀ գործողությունների ծրագիրը ընտրական գործընթացներում ազգային փոքրամասնությունների ներգրավման համար հետապնդում է հետևյալ նպատակները՝

- խթանել ազգային փոքրամասնությունների մասնակցությունն ընտրություններում՝ հաշվի առնելով լեզվական, մշակութային և ավանդական առանձնահատկությունները,
- խրախուսել ազգային փոքրամասնությունների մասնակցությունն ընտրական գործընթացում որպես թեկնածուներ, վստահված անձինք, դիտորդներ և ընտրական վարչարարության ներկայացուցիչներ:

2. Ընտրական վարչարարության զարգացում

2.1 ԿԸՀ և աշխատակազմ

ԿԸՀ աշխատակազմի հիմնական մասը քաղաքացիական ծառայողներ են: Աշխատակազմը կազմված է գլխավոր քարտուղարից, գլխավոր քարտուղարի տեղակալից, հայեցողական պաշտոններից, կառուցվածքային ստորաբաժանումներում ընդգրկված պաշտոններից, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանցից:

ԿԸՀ-ն իր գործունեությունն ապահովվում է ԿԸՀ աշխատակազմի միջոցով և, ԿԸՀ աշխատանքի արդյունավետության տեսանկյունից, զգալի կարևորություն ունի մարդկային ռեսուրսների բավարար քանակը, ԿԸՀ-ի և աշխատակազմի

պատրաստվածության աստիճանը, շարունակական կրթության ապահովման հնարավորությունը, բարոյահոգեբանական վիճակը, լիազորությունների և պատասխանատվության համաչափ բաշխումը: Վերջինիս համար առանցքային նշանակություն ունի աշխատակազմի կազմակերպչական կառուցվածքը, ինչպես նաև ԿԸՀ-ի և աշխատակազմի միջև գծային և ֆունկցիոնալ կապը, ինչպես նաև՝ հարաբերությունները:

Իր սահմանադրական անկախությունն ապահովելու, հաճախ փոփոխվող մարտահրավերներին ժամանակին և համահունչ արձագանքելու, մարդկային ռեսուրսներն արդյունավետ կառավարելու համար ԿԸՀ-ն պետք է ունենա իր աշխատակազմը ձևավորելու բավարար ազատություն և ճկունություն:

ԿԸՀ կառուցվածքը պետք է համահունչ լինի ԿԸՀ կարգավիճակին, լիազորություններին և դերին: Անհրաժեշտ է դասակարգել ԿԸՀ առանցքային գործառույթները և, դրանով պայմանավորված, նախատեսել մասնագիտացված ստորաբաժանումներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր գործառույթի, դրանով պայմանավորված յուրաքանչյուր միջոցառման պլանավորման և իրականացման հարցերի լուծումը: Վերը նշյալով պայմանավորված, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրությամբ, տեսանելի է, որ ԿԸՀ աշխատակազմում բացակայում են ուսուցմամբ և իրազեկմամբ, ռազմավարական պլանավորմամբ և գնահատմամբ զբաղվող ստորաբաժանումները, ինչպես նաև մարդկային ռեսուրսների զարգացմամբ զբաղվող ստորաբաժանումը:

ԿԸՀ կառուցվածքում է ընդգրկված նաև Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը՝ «ՎՎԾ»: ՎՎԾ ղեկավարը նշանակվում է ԿԸՀ-ի կողմից և օժտված է բավարար անկախությամբ՝ վերահսկողական գործառույթները պատշաճ կազմակերպելու համար: ՎՎԾ-ն բացի ղեկավարից ունի ևս երկու աշխատակից, որոնք հանդիսանում են ԿԸՀ աշխատակազմի քաղաքացիական ծառայողներ: Ընտրությունների ընթացքում, ծանրաբեռնվածությունից ելնելով, ՎՎԾ-ն կարող է ներգրավել նաև պայմանագրային աշխատողներ: ՎՎԾ վերահսկողական գործառույթների իրականացման հետ կապված՝ քաղաքացիական հասարակության կողմից կան պնդումներ, որ ՎՎԾ-ն զուտ ֆինանսական վերահսկողությունից զատ պետք է իրականացնի բովանդակային-ստուգողական գործունեություն, ներառյալ՝ միջոցառումների, տպագրված նյութերի, շտաբների և այլ ծախսերի նկատմամբ փաստահավաք վերահսկողություն: ՎՎԾ-ի ներկայիս ռեսուրսը բավարար է զուտ ֆինանսական վերահսկողությունը պատշաճ կազմակերպելու համար, սակայն սեփական նախաձեռնությամբ բովանդակային վերահսկողություն կազմակերպելու համար անհրաժեշտ է ՎՎԾ-ին վերազինել մարդկային և նյութական լրացուցիչ ռեսուրսներով:

Անհրաժեշտ է ԿԸՀ աշխատակազմի ավելի ինստիտուցիոնալացում, համալրում, պատրաստվածության մակարդակի շարունակական բարձրացում, որը ոչ միայն կբարձրացնի ԿԸՀ աշխատանքի արդյունավետությունը, այլ նաև

կապահովի ընտրական վարչարարության ինստիտուցիոնալ հիշողությունը, ձևավորման և փոխանցման կարևոր դերակատարությունը:

2.2 Նյութատեխնիկական և ներկայացուցչական ապահովվածություն, կարողությունների զարգացում

ԿԸՀ-ն 2002 թվականից զբաղեցնում է Երևան քաղաքի Գ. Քոչար հասցեում գտնվող շենքը, որը վերջին անգամ ընթացիկ վերանորոգվել է 2011 թվականին: ԿԸՀ վարչական շենքն անհրաժեշտ է հիմնանորոգել: ԿԸՀ-ն նպատակ ունի բարելավել ԿԸՀ անդամների, ԿԸՀ աշխատակազմի նյութատեխնիկական կարիքները, ինչպես նաև վերազինել ԿԸՀ շենքում գործող ուսումնական և ռեսուրս կենտրոնը, ինչը հնարավորություն կտա ԿԸՀ-ում կազմակերպել ընտրական վարչարարության ներկայացուցիչների և այլ շահառուների ուսուցումներ, հանդիպումներ, ինչպես նաև ՏԸՀ անդամության թեկնածուների համար էլեկտրոնային ստուգարքներ:

ԸԸՀ-ներն ապահովված չեն շենքային և տեխնիկական լիարժեք միջոցներով, մատչելի չեն հենաշարժական համակարգի հետ խնդիրներ ունեցող անձանց համար, նրանց նստավայրերում հնարավոր չէ կազմակերպել, օրինակ, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և այլ շահառուների համար հանդիպումներ, դասընթացներ: Մի մասի նիստերի սենյակների հագեցվածությունն անգամ թույլ չի տալիս կազմակերպել նիստերի պատշաճ անցկացումը: ԿԸՀ-ն ընտրական բարեփոխումների համատեքստում նպատակ ունի էապես բարելավել ԸԸՀ-ների շենքային պայմանները: Այս առումով հատուկ ուշադրության կենտրոնում են, հատկապես, մարզերում գործող ԸԸՀ-ները՝ հետևյալ պատճառաբանությամբ՝

Հայաստանի 70 համայնքներից 61-ում ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով և ԸԸՀ-ների գործառույթները, դերը, նրանց նկատմամբ սպասելիքներն ու ակնկալիքներն աճել են և դեռ շարունակաբար աճելու են: Համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններն իրենց կազմակերպչական բարդությամբ, քաղաքական ընդգրկվածությամբ և ծավալով էապես տարբերվում են մեծամասնական ընտրակարգից: Մասնավորապես, ԸԸՀ-ն իր նիստում է ընտրական ցուցակի հաջորդ թեկնածուին նոր մանդատ տրամադրում, ինչով պայմանավորված՝ ժամանակ առ ժամանակ գումարվում են նիստեր: ԸԸՀ-ներն իրենց կողմից իրականացվող վարչական վարույթի նյութերը, ընդունած որոշումները և նիստերի օրակարգերը, կազմված արձանագրությունները ԿԸՀ կայքում տեղադրելու պարտավորություն ունեն: Նշված գործառույթները պատճաշ կազմակերպելու համար ԸԸՀ-ներն ունեն նաև կարողությունների մշտապես, պարբերաբար զարգացման կարիք: Ընդ որում, եթե Երևան քաղաքում գործող ԸԸՀ-ները նիստեր են գումարում և վարչարարություն իրականացնում միայն ԱԺ և Երևանի ավագանու

ընտրությունների ընթացքում, ապա մարզերում գործող ԸԸՀ-ներն արդեն իսկ բերված պատճառներով՝ նաև ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածներում: ԸԸՀ-ների հագեցվածության նոր կոնցեպտն էապես կնպաստի վերը նշված խնդիրների լուծմանը: Մարզերում տեղակայված ԸԸՀ-ների շենքերը կծառայեն նաև ԿԸՀ-ի կողմից ընտրական վարչարարության բոլոր մակարդակներում աշխատող անձանց, ընտրական բոլոր շահառուների, ընտրողների, քաղաքացիների կրթության խնդրին: Ծրագիրը հաջող իրագործելու դեպքում ԸԸՀ շենքերը կդառնան մարզերում գործող ուսումնական կենտրոններ (տես նաև՝ 3. 2 Մարզային ուսումնական կենտրոններ): Ուսումնական կենտրոնները մյուս կողմից կօգնեն ունենալ ավելի բարձր գիտելիքներով և կարողություններով օժտված ԸԸՀ կազմեր: ԸԸՀ անդամները ներգրավված կլինեն ուսումնական ծրագրերում՝ որպես ուսուցանողներ, կազմակերպիչներ, այսպիսով, ունենալով հնարավորություն լինելու ընտրական վարչարարության մշտական և արհեստավարժ ներկայացուցիչներ:

Ընտրական օրենսդրությամբ ՏԻՄ-երը պատասխանատու են ոչ միայն տեղամասային կենտրոնների, այլև քվեարկության սենյակի պատշաճ կահավորման համար: Չնայած ԸՕ վերջին փոփոխություններով ԿԸՀ-ին տրվեց լիազորություն տեղամասային կենտրոնների նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու համար, ինչպես նաև ԸԸՀ-ներին՝ տեղամասային կենտրոնների նկատմամբ պահանջները վերահսկելու լիազորություն, այնուամենայնիվ, գործընկերների հետ հանդիպումներում մատնանշվում են տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների հետ կապված նյութատեխնիկական մի շարք խնդիրներ: Այդ խնդիրները կապված են ոչ միայն ընտրված տեղամասային կենտրոնները բարելավելու հետ, այլև տեղամասային կենտրոնների ընտրության փուլում ավելի բարվոք տարածքներ ձեռք բերելու հետ, քանի որ երբեմն տեղամասի տարածքում կան ավելի բարվոք շենքեր և շինություններ, սակայն դրանք չեն ընտրվում: ԿԸՀ-ն նպատակ ունի ավելի մեծ ջանքեր ներդնելու քվեարկությունը տեղամասային կենտրոններում առավել հարմարավետ և արդյունավետ կազմակերպելու համար և նույնը պահանջելու պատասխանատու այլ մարմիններից (Տես նաև 1.5 Հաշմանդամություն ունեցող անձինք):

2.3 ԸԸՀ կազմավորման վերանայում / բարելավում

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կազմված է ոչ ավելի, քան 7 անդամից: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ և հանձնաժողովի քարտուղար: ԸԸՀ անդամները նշանակվում են ԿԸՀ-ի կողմից հրապարակային հայտարարությամբ՝ դիմումների ընդունման միջոցով: ԸԸՀ անդամներն իրենց պաշտոնավարման ընթացքում չեն

կարող լինել որևէ կուսակցության անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ, պարտավոր են պահպանել քաղաքական չեզոքություն և զսպվածություն:

ԸՕ-ի համաձայն՝ ԸԸՀ-ների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 41-ը: Այսօր կազմավորված է ընդհանուր թվով 38 ԸԸՀ՝ 10-ը՝ Երևան քաղաքում և 28-ը՝ հանրապետության 10 մարզերում:

Գործող ԸԸՀ-ները կազմավորվել են 2022 թվականի դեկտեմբերի 17-ին՝ 6 տարի ժամկետով: ԿԸՀ-ն պարտավոր է ԸԸՀ կազմավորումից հետո իրականացնել ԸԸՀ անդամների ուսուցում: Կազմավորումից հետո ԿԸՀ-ն սկսել է ԸԸՀ-ների ուսուցման գործընթացը, նախ՝ կազմակերպելով ուսուցանողների ուսուցում, իսկ այնուհետև, 2023 թվականի ընթացքում, կազմակերպել է բոլոր ԸԸՀ-ների համար ուսուցում: Ուսուցման ծրագրում ներառվել են ոչ միայն ընտրական օրենսդրությանն առնչվող թեմաներ, այլ նաև թեմաներ, ինչպիսիք են՝ աշխատանքների կազմակերպումը, առաջնորդությունը, կոնֆլիկտների կառավարումը, հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքը: Ի դեպ, Երևանում գործող ԸԸՀ-ների և մարզերում գործող ԸԸՀ-ների համար ուսուցումն իրականացվել է տարբեր ծրագրերով, ելնելով ԸՕ-ով սահմանված գործառույթների շրջանակներից:

Հաշվի առնելով ԸԸՀ-ների գործառույթների ընդլայնման տեսլականը, համադրելով նրանց ներկայացվելիք նոր պահանջները և գործընկերների հետ հանդիպումների ընթացքում հնչած կարծիքները, փաստում ենք, որ բավարար չէ միայն կազմավորվելուց հետո ուսուցում կազմակերպելը:

ԿԸՀ-ն նպատակ ունի ԸԸՀ-ների ուսուցումները դարձնել պարբերական և շարունակել զարգացնել և հարստացնել ուսուցանվող նյութերը, կազմակերպել ԸԸՀ անդամների գիտելիքների գնահատման գործընթաց, ինչպես նաև՝ ԸԸՀ կարողությունների, պատրաստվածության և զբաղվածության նոր շեմ սահմանել, որը կբերի ԸԸՀ-ների անկախության և ինքնուրույնության մակարդակի բարձրացմանը, նրանց նկատմամբ հանրային ընկալման բարելավմանը (տես նաև՝ 3. 2 Մարզային ուսումնական կենտրոններ):

ԸԸՀ անդամներ նշանակելուց երբեմն դիմումների սակավ քանակի պատճառով ընտրությունը սահմանափակ է: Կան դեպքեր, երբ մեկ թափուր տեղի համար ԿԸՀ-ն ստանում է մեկ դիմում: Բարձրացնելով ԸԸՀ դերը, ԿԸՀ-ն նպատակ ունի նպաստել ավելի մեծ հետաքրքրություն ձևավորելու ԸԸՀ թափուր տեղերում դիմելու համար, որն իր հերթին կբարձրացնի ավելի մրցունակ կադրեր ներգրավելու հնարավորությունը:

2.4 ՏԸՀ կարողությունների բարելավում

Տեղամասային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ) ձևավորվում են յուրաքանչյուր ընտրության համար՝ հերթական ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից 25 օր առաջ, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում՝ 18 օր առաջ: ՏԸՀ անդամների գերակշիռ մասը, ներառյալ՝ ՏԸՀ նախագահը և քարտուղարը նշանակվում են ԱԺ խմբակցությունների կողմից: Յուրաքանչյուր ՏԸՀ-ում երկուական անդամ նշանակվում են համապատասխան ԸԸՀ-ի կողմից: ՏԸՀ կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ՏԸՀ-ում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք: Ստուգարքի արդյունքում ստուգվում են ՏԸՀ գործառույթների մասին նվազագույն գիտելիքները և որակավորման վկայական ստանալու շեմը կարելի է համարել բավական ցածր: ԿԸՀ-ն պարբերաբար (տարին առնվազն մեկ անգամ) կազմակերպում է ՏԸՀ անդամների որակավորման դասընթաց և ստուգարք:

ՏԸՀ աշխատանքը, նրանց իմացության մակարդակը, կարողությունները, սպասարկման որակը կարևոր են ընտրությունների գնահատման տեսանկյունից:

Համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ մշտապես, մյուս ՏԻՄ ընտրությունների ժամանակ՝ ըստ անհրաժեշտության, ԿԸՀ-ն կազմակերպում է ձևավորված ՏԸՀ անդամների վերապատրաստման գործնական դասընթացներ, որի ժամանակ գիտելիքների փոխանցումն ավելի ինտերակտիվ և արդյունավետ է, քան որակավորման դասընթացներին: ԱԺ ընտրությունների ժամանակ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության զեկույցներում այս դասընթացները գնահատվել են դրական, արդյունավետ և լավ կազմակերպված: Երևանի ավագանու վերջին ընտրություններին (17 սեպտեմբեր, 2023) առաջին անգամ կազմակերպվել են նաև ձևավորված ՏԸՀ-ների նախագահների և քարտուղարների դասընթացներ: Տեղական դիտորդական առաքելությունների զեկույցներում, ինչպես նաև գործընկերների հետ հանդիպումներում կարծիք է հայտնվում ՏԸՀ գիտելիքների և հմտությունների բարձրացման անհրաժեշտության, ինչպես նաև թերությունների դեպքում վարչական պատասխանատվության հետևողականության կիրառման մասին: Փորձը ցույց է տալիս, որ հաճախ ՏԸՀ նախագահի և քարտուղարի պաշտոնում նշանակվում են անփորձ կադրեր, որոնք երբեմն ոչ միայն ՏԸՀ աշխատանքի փորձ չեն ունենում, այլև անգամ որպես ընտրող ընտրություններին մասնակցում են առաջին անգամ: Մյուս կողմից, անգամ նրանք, որոնք ընդգրկված են եղել ՏԸՀ կազմում և անգամ ղեկավար պաշտոններում ոչ միշտ են բավարարում սպասելիքները: ՏԸՀ-ում ղեկավար պաշտոն զբաղեցնելու համար բավարար չէ ընտրական օրենսդրության վերաբերյալ նվազագույն գիտելիքները: ԿԸՀ-ն ունի լիազորություն ՏԸՀ նախագահի և քարտուղարի համար առանձին որակավորման պահանջ կիրառելու: ԿԸՀ-ն նպատակ է դնում ՏԸՀ նախագահի և քարտուղարի պաշտոնում նշանակվելու համար ունենալ առանձին որակավորում, որով պայմանավորված ստուգարքի ժամանակ օրենսդրության իմացությունից զատ

կստուգվեն նաև առաջնորդության հմտությունները, ղեկավարման փորձը և կարողությունները:

2. 5 ԿԸՀ պաշտոնական կայքի զարգացում

Ընտրական օրենսգրքի 8 և 8.1 հոդվածների, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի այլ դրույթների, «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի, «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներդրված են և շահագործվում են մի շարք համակարգեր և առցանց հարթակներ:

Այդ համակարգերի մի մասը ներդրվել են դեռևս 2007 թվականին և շահագործվում են մինչ օրս: Ընտրական օրենսգրքի փոփոխություններով պայմանավորված՝ նշված համակարգերը պարբերաբար արդիականացվել են, համապատասխանեցվել օրենսդրությանը, և դրանց զուգահեռ ներդրվել են նոր համակարգեր:

Նկատի ունենալով Հայաստանում ընթացող ծառայությունների մատուցման գործընթացների թվայնացման ուղղությամբ տարվող աշխատանքները, ԿԸՀ-ում ներդրված համակարգերի ամբողջականացման ու նոր համակարգերի ներդրման անհրաժեշտությունը՝ 2026 թվականի ԱԺ հերթական ընտրություններին ընդառաջ կարիք է առաջանում կատարել հետևյալ աշխատանքները.

Նոր ճարտարապետության նախագիծ, որը թույլ կտա առանձնացնել համակարգերն ըստ դոմեյնների՝

- ✓ գործող տվյալների բազաների ուսումնասիրություն և տվյալների առանձնացում՝ ըստ համակարգերի (data mapping),
- ✓ համակարգերի առանձնացում՝ առանձին տվյալների բազաներով (առնվազն 12 համակարգ),
- ✓ առանձնացված համակարգերի ինտեգրում՝ միկրոսերվիսային ճարտարապետության շրջանակում, որը նաև հնարավորություն կտա ապահովել տվյալների փոխգործելիությունն այլ պետական մարմինների տվյալների հետ,
- ✓ օգտվողների կառավարման (Authentication, Authorization) միասնական համակարգի ներդրում (single sign-on):

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայք՝ **https://elections.am**

- ✓ կայքի գլխավոր էջում կայքի և էջերում ընդհանուր որոնման հնարավորության ներդրում,
- ✓ ՀՈՒԱ համար կայքում ներդրված գործիքների կատարելագործում, այդ թվում՝
  - տեսողության խնդիրներ ունեցողների գործիքակազմի բարելավում,

- կայքի որոշ բաժիններում տեղադրված նյութերի ձայնագրությունների ավտոմատ գեներացման և հրապարակման հնարավորություն,
- կայքում հրապարակվող նկարների նկարագրությունների հրապարակման հնարավորություն,
- կայքում հրապարակվող տեսահոլովակներին սեղմագրեր կցելու հնարավորություն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում Հաշվետվական-Վերլուծական համակարգի ներդրում՝ Ընտրությունները թվերով կամ Թվային ընտրություններ՝ **https://elections.am**

- ✓ ընտրությունների ընդլայնված որոնման բաժնի ստեղծում, ինտերակտիվ ռեժիմում տարբեր կտրվածքներով վիճակագրական տվյալների ստացում,
- ✓ Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող, ինչպես նաև կայացած ընտրությունների վերաբերյալ մեկ տեղում՝ ըստ տարբեր չափանիշների ամփոփ տվյալների ստացում, իսկ կայքում հրապարակված տվյալների դեպքում՝ նաև ցանկերի ներբեռնման հնարավորություն,
- ✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում առկա տվյալների (անձնական տվյալները չեն հրապարակվում) թվային տեսքով հրապարակում՝ ըստ ընտրված չափանիշների (ըստ սեռի, տարիքային խմբերի, տրված ժամանակահատվածի, մարզերի, համայնքների և այլն),
- ✓ ստացված վիճակագրական տվյալների ներկայացում նաև գրաֆիկական եղանակով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող համակարգերի ամբողջականացում՝

- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների տվյալների առցանց ներկայացման համակարգ՝ **https://e-lists.elections.am,**

  (Այժմ այս գործառույթներն իրականացվում են 2 տարբեր համակարգերով և կան գործառույթներ, որ ամբողջական ավտոմատացված չեն, նպատակահարմար է ամբողջ գործառույթն իրականացնել մեկ համակարգով),
- ✓ դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների առցանց գրանցման (հավատարմագրման) համակարգ՝ **https://accreditation.elections.am/,**
- ✓ հանձնաժողովի կայքի, ԿԸՀ այլ համակարգերի կառավարման վահանակ՝ **https://cms.elections.local,**
- ✓ կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ընտրական ցուցակների առցանց ներկայացման համակարգ՝ **https://e-lists.elections.am**,
- ✓ քվեարկության օրվա գործառույթների իրականացման համակարգ:

(Այժմ այս գործառույթներն իրականացվում են տարբեր համակարգերով, նպատակահարմար է ամբողջ գործառույթն իրականացնել մեկ համակարգով):

3. Ուսուցում և իրազեկում

3.1 Ուսումնական ստորաբաժանում

Ուսուցումն ընտրական գործընթացում ունի առանցքային դեր: Այն ընտրական վարչարարության մարմինների անդամների, ինչպես նաև ընտրություններին մասնակցող այլ շահագրգիռ կողմերի և դերակատարների համար ոչ միայն նոր իրավական գիտելիքների ձեռքբերում է, այլ նաև՝ առանցքային միջոց կարողություններ և հմտությունների զարգացման համար, ինչն անհրաժեշտ է ընտրական օրենսդրության միատեսակ և անկողմնակալ կիրառման համար՝ նվազագույնի հասցնելով սխալներն ու բացթողումները: Հատուկ վերապատրաստում անցած ընտրական հանձնաժողովների անդամները, ինչպես նաև այլ դերակատարներն ավելի արագ են կողմնորոշվում, կարողանում են նկատել և կանխել հնարավոր բացթողումները կամ ընտրախախտումները: Ընտրական հանձնաժողովի իրազեկված անդամներն ավելի արդյունավետ են գործում ոչ ստանդարտ իրավիճակներում՝ գտնելով օրենքի տառին և ոգուն համահունչ լուծումներ: Արհեստավարժ ընտրական հանձնաժողովների անդամների շնորհիվ էլ ավելի է բարձրանում հանրային վստահությունը ընտրական գործընթացների նկատմամբ:

ԿԸՀ-ն տասնամյակներ շարունակ և, հատկապես, համապետական ընտրությունների շրջափուլերում, կազմակերպել և անցկացրել է ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների դասընթացներ: Սովորաբար այս դասընթացներն իրականացվել են միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

Ընտրական հանձնաժողովների անդամների, ինչպես նաև ընտրություններում ներգրավված այլ դերակատարների վերապատրաստումը կայուն ինստիտուցիոնալ հենքի վրա դնելու համար՝ ԿԸՀ-ն նախատեսում է հիմնել ուսումնական կենտրոն:

Այս ռազմավարական նպատակին հասնելու համար ԿԸՀ-ն իրականացնելու է հետևյալը՝

- միջազգային փորձի ուսումնասիրություն, հատկապես այն երկրներում, որտեղ առկա են ուսումնական կենտրոններ (Վրաստան, Հարավային Կորեա, Մոլդովա, Բոսնիա և Հերցեգովինա, Ուկրաինա, Հյուսիսային Մակեդոնիա, Ղրղզստան),
- ուսումնական կենտրոնի գործունեության շրջանակի սահմանում և աշխատակարգի մշակում,

- ուսումնական և վերապատրաստման ծրագրերի մշակում տարբեր շահառուների համար, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների, ՁԼՄ ներկայացուցիչների, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների, ընտրողների, իրավապահ և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ շահառուների համար:

3. 2 Մարզային ուսումնական կենտրոններ

Ընտրական հանձնաժողովների համակարգի բարեփոխումների ընդհանուր համատեքստում (տես՝ Ռազմավարական հենասյուն թիվ 2-ը), որով վերանայվելու և բարելավվելու են ԸԸՀ ենթակառուցվածքները, ԿԸՀ-ն նպատակ է դնում վերապատրաստման ծառայությունները և ընտրողների իրազեկումը դարձնել ավելի հասանելի:

ԿԸՀ-ն տարեկան առնվազն մեկ անգամ ՏԸՀ անդամության թեկնածուների համար կազմակերպում և անցկացնում է մասնագիտական դասընթացներ և որակավորման ստուգարքներ, որոնց տարեկան կարող է մասնակցել մինչև 40 հազար քաղաքացի: Այս դասընթացների անցկացման համար ներգրավվում են նյութական և մարդկային ռեսուրսներ ԿԸՀ-ից: Բացի դա, մարզային դասընթացները հաճախ կազմակերպվում են անբավարար ենթակառուցվածքների պայմաններում, ինչն իր բացասական ազդեցությունն է ունենում գիտելիքների և հմտությունների փոխանցման արդյունավետության վրա:

Ի լրումն վերը նշվածի, մարզերում լայն հանրության համար ժողովրդավարության, մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունը և առհասարակ քաղաքացիական կրթության հասանելիությունը զգալիորեն ավելի սահմանափակ է, քան Երևանում: Այս բացը փորձում են լրացնել մի շարք պետական կամ հասարակական կառույցներ, հաճախակի միջազգային կազմակերպությունների և դոնորների աջակցությամբ:

ԸԸՀ-ների հենքի վրա ստեղծվելիք մարզային ուսումնական կենտրոններն իրենց բնույթից ելնելով՝ ունենալու են մի շարք առավելություններ նմանատիպ այլ նախաձեռնությունների նկատմամբ: Ուսումնական կենտրոնները կհանդիսանան ընդհանուր ընտրական բարեփոխումների իրագործումն ապահովող հնարավորություն, ընտրական մարմինների ունեցած ձեռքբերումները շարունակելու և ամրապնդելու երաշխիք: ԸԸՀ-ներն ապահովված կլինեն ներկայացուցչական, միանման, մատչելի, ԸԸՀ բոլոր գործառույթներն իրականացնելու համար բավարար պայմաններով՝ շենքերով և տեխնիկական միջոցներով: Ուսումնական կենտրոններն ամբողջության մեջ, որպես մեկ ընդհանուր մարմին, կարող են հիմք ստեղծել քաղաքացիական կրթության

համապարփակ մոտեցման համար՝ մեկտեղելով ինչպես ակադեմիական, այնպես էլ ոչ ակադեմիական և ոչ ֆորմալ ուսումնական մեթոդներ և ձևեր, ինչպես նաև ապահովել միասնական մոտեցում՝ պետության ողջ տարածքում: Կենտրոնների գործունեությունն ընդգրկելու է հասարակության բոլոր շերտերը, սոցիալական բոլոր խմբերը: Կազմակերպվելու է ժողովրդավարական գործընթացների բոլոր շահառուների շարունակական կրթություն և վերապատրաստում:

Վերոհիշյալից բացի, Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը (IFES) մշակել է «Ներգրավված քաղաքացի» անվանմամբ դասընթաց, որը 2020 թվականից սկսած դասավանդվում է Հայաստանի ավելի քան 15 ԲՈՒՀ-երում, իսկ 2023 թվականից սկսած այն ներդրվել է 54 ուսումնարաններում՝ ընդգրկելով բոլոր մարզերը: Այդ դասընթացը հեշտությամբ կարող է հարմարեցվել և հասանելի դառնալ ուսումնական հաստատություններում չընդգրկված քաղաքացիների համար՝ ԸԸՀ մարզային ուսումնական կենտրոնների դասընթացավարների միջոցով, որոնք նախապես վերապատրաստված կլինեն IFES-ի կողմից:

Մարզային ուսումնական կենտրոնների ստեղծման համար ԿԸՀ-ն սահմանել է հետևյալ ռազմավարական նպատակները՝

- ուսումնասիրել ապակենտրոնացված քաղաքացիական կրթություն մատուցող կառույցների մոդելները և վերլուծել փորձը,
- ստեղծել գործընկեր կազմակերպություններից և շահագրգիռ կողմերից կազմված ներկայացուցչական խորհուրդ, ինչը կնպաստի ծրագրի իրականացման թափանցիկությանը, տեղեկատվության արագ փոխանակմանը, ցանկացած մարտահրավերներին արագ արձագանքմանը,
- ընտրել առավել արդյունավետ կազմակերպական-իրավական ձև՝ դիտարկելով հիմնադրամի ստեղծումը որպես հնարավոր տարբերակ,
- իրականացնել ԸԸՀ հենքի վրա ուսումնական կենտրոններ ստեղծելու հաշվարկ, ինչպես նաև ընթացիկ ծախսերի հաշվարկ: Սահմանել մարզային ուսումնական կենտրոնի գործունեության շրջանակը և տարեկան կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը,
- միջոցներ ձեռնարկել մի քանի մարզերում (ԸԸՀ-ներում) փորձարարական ծրագրի իրականացման համար,
- ամփոփել փորձարարական ծրագիրը, գնահատել դրա արդյունավետությունը, անհրաժեշտության դեպքում վերանայել իրականացման եղանակները և մատուցվող ծառայությունների բովանդակությունը,
- դիտարկել հաջողված փորձի տարածումը այլ մարզերում (ԸԸՀ-ներում):

3.3 Էլեկտրոնային ուսուցման և ատեստավորման համակարգ

Արդի պայմաններում առավել մեծ տարածում են ստանում էլեկտրոնային ուսուցման հարթակները, որոնք ունեն մի շարք առավելություններ՝ առավել ավանդական ուսուցման մեթոդների նկատմամբ: Էլեկտրոնային ուսուցման միջոցով վերանում են աշխարհագրական արգելքները և սովորողն ինքն է ընտրում իր ուսուցման տեմպը: Այն ավելի ճկուն է, քանի որ սեփական զբաղվածությունից ելնելով՝ սովորողը կարողանում է ընտրել իր համար առավել հարմար ժամանակը: էլեկտրոնային ուսուցումը զգալիորեն քիչ ծախսատար է, քանի որ վերանում են տպագիր նյութերի պատրաստման, տարածքի օգտագործման կամ վարձակալության և մասնակիցների տրանսպորտային ծախսերը: էլեկտրոնային ուսուցման միջոցով հնարավոր է դառնում տեղեկատվությունը մատուցել միաժամանակ հազարավոր մասնակիցների: Որոշ էլեկտրոնային ուսուցման հարթակներ նաև կիրառում են անհատականացման գործիքներ, որտեղ հատուկ ալգորիթմների միջոցով ուսուցման նյութը հարմարեցվում է սովորողի ունակություններին և կարիքներին: Էլեկտրոնային հարթակներն ապահովում են ակնթարթային հետադարձ կապ, որտեղ սովորողը պատասխանում է հարցերի, լուծում է խնդիրներ, ստանում է իր պատասխանների արդյունքները և կարողանում է հետևել իր առաջադիմությանը:

2020 թվականից սկսած ԿԸՀ-ն գործարկել է էլեկտրոնային ուսուցման հարթակ, որտեղ զետեղված են միջազգային գործընկերների աջակցությամբ մշակված դասընթացներ ՏԸՀ անդամների, դիտորդների, վստահված անձանց, տեխնիկական սարքավորման մասնագետների, մտավոր և լսողական հաշմանդամություն ունեցող ընտրողների համար, ինչպես նաև այլ ուսուցողական նյութեր: Բովանդակային առումով առկա նյութերը բավականին հագեցած են և գործարկված են գրավիչ ինտերակտիվ գործիքներ: Այնուհանդերձ, գործող էլեկտրոնային հարթակն ունի մի շարք թերություններ: Ընտրական օրենսդրությունը պարբերաբար ենթարկվում է փոփոխությունների, ուստի, ԿԸՀ էլեկտրոնային ուսուցման հարթակի բովանդակությունը պետք է համապատասխանեցվի օրենսդրությանը: Գործող էլեկտրոնային ուսուցման հարթակի ծրագրավորման համար օգտագործված գործիքները ճկուն չեն, և դասընթացի կառուցվածքն ու բովանդակությունն անհնար է փոփոխել առանց ծրագրավորման՝ ՏՏ մասնագետների միջամտության:

Ներկայում կիրառվող թղթային ստուգարքներին զուգահեռ կամ դրանց փոխարեն ՏԸՀ անդամության թեկնածուները պետք է կարողանան համապատասխան դասընթացն անցնել առցանց՝ վերահսկվող միջավայրում (օրինակ՝ ԸԸՀ տարածքներում) հանձնելով ստուգարք:

Այս ռազմավարական նպատակին հասնելու համար ԿԸՀ-ն իրականացնելու է հետևյալը՝

- ուսումնասիրել էլեկտրոնային ուսուցման հարթակների ստեղծման և շահագործման միջազգային փորձը՝ գնահատելով դրանց

արդյունավետությունը, գործարկման հարմարավետությունը և ծախսատարությունը,

- կազմել տեխնիկական առաջադրանք, կազմակերպել գնման գործընթացը, վերահսկել առաջադրանքի իրագործումը,
- վերանայել և թարմացնել ընթացիկ դասընթացները, մշակել լրացուցիչ դասընթացներ նոր թիրախային լսարանների համար,
- իրականացնել հանրային իրազեկում ինչպես կոնկրետ շահառուների, այնպես էլ լայն հանրության շրջանում:

3. 4 Ծանուցումների էլեկտրոնային համակարգ

ԿԸՀ-ն վերջին մի քանի ԱԺ և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ իր պաշտոնական կայքում հրապարակվող ընտրողների ցուցակներին կից՝ զետեղում է գործիք, որով ընտրողները կարող են գտնել իրենց տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը՝ Google քարտեզի վրա: Սա ևս ամբողջովին չի լրացնում բացը, քանի որ քաղաքացիները երբեմն իրազեկված չեն, երբեմն իներցիայով գնում են իրենց վերջին անգամ ընտրությանը մասնակցած տեղամասային կենտրոն, առանց ստուգելու իրենց տվյալները:

ԿԸՀ-ն ՏԸՀ դասընթացները կազմակերպելու ընթացքում իրականացնում է մասնակիցների՝ իրենց դասընթացի վայրի և ժամի մասին ծանուցում: Մասնակիցների քանակը կարող է հասնել մինչև քառասուն հազարի: Չնայած վերջին տարիներին այս ծանուցումներն ուղարկելու մեթոդները բարելավվել են, և մասնակիցները ծանուցումներն ստանում են նաև SMS հաղորդագրությամբ և էլ. փոստերով, սակայն այն ևս ամբողջովին չի լուծել խնդիրը, քանի որ հեռախոսահամարները կամ էլ. փոստի հասցեները հաճախ սխալներով են մուտքագրվում: ԿԸՀ-ն նպատակ ունի ստեղծել ՏԸՀ անդամության թեկնածուների և նշանակված անդամների համար էլեկտրոնային ծանուցումների հարթակ: Դասընթացի մասնակիցները ոչ միայն տեղեկություն կստանան իրենց դասընթացի մասին, այլև անդամության թեկնածուները հարթակի միջոցով կկարողանան փոխել իրենց ստուգարքի օրը, վայրը, ստանալ իրենց գնահատականը, բողոքարկել ստուգարքի արդյունքը և այլն: Այս հարթակը հնարավորություն կտա ՏԸՀ անդամին ստանալու ոչ միայն ուսուցումների հետ կապված, այլև շատ այլ տեղեկություններ, օրինակ՝ հանձնաժողովի անդամ նշանակվելու կամ լիազորությունները դադարելու մասին տեղեկությունը, տեղամասային կենտրոնի հասցեն, առաջին նիստերի ժամերը և այլն:

ԿԸՀ-ն ունի նաև հեռահար նպատակ՝ ստեղծվելիք հարթակը զարգացնել՝ դարձնելով այն ընտրողների իրազեկման հարթակ: Այս հարթակի միջոցով այլ շահառուների հետ ևս հաղորդակցությունը կդարձնի որքան հնարավոր է էլեկտրոնային: Օգտագործելով այս հարթակը՝ ընտրողը կամ լրացուցիչ

կարգավիճակ ունեցող ցանկացած անձ, կունենա իր անձնական սենյակը, կստանա և կուղարկի ընտրությունների հետ առնչվող անհրաժեշտ տեղեկություններ: ԿԸՀ հաղորդակցությունը կդառնա արագ, դյուրին, առանց ֆիզիկապես այցելելու և առանց թղթային արխիվի: Հարթակը կարող է անընդհատ զարգանալ:

3. 5 Իրազեկում

ՄԱԿ-ի 1996 թվականի՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների» միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի վերաբերյալ թիվ 25 մեկնաբանության 11-րդ մասում նշվում է. «Ընտրողների կրթությունը և գրանցման իրազեկման արշավներն անհրաժեշտ են 25-րդ հոդվածով սահմանված հանրության կողմից իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար»:

Ժողովրդավարության կայացման գործում անփոխարինելի է հանրության դերը, և դա հնարավոր է միայն ժողովրդավարական մտածողություն և արժեքներ ունեցող հասարակության պարագայում: Քաղաքացիական կրթությունն ու իրազեկումը մշտական և շարունակական գործընթաց է:

ԿԸՀ-ն ունի քաղաքացիական կրթության և իրազեկման դրական մեծ փորձ: ՄԱԶԾ ընտրությունների աջակցության ծրագրի և IFES հայաստանյան գրասենյակի հետ համատեղ ԿԸՀ-ն իրականացրել է մի շարք հանրային իրազեկման արշավներ, հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության, տեղամասերի գտնվելու վայրի, մատչելի տեղամասերի, համայնքների միավորման, ընտրակարգերի, քվեարկության կարգի, ընտրողների ցուցակների, տեխնիկական սարքավորումների, երիտասարդների մասնակցության, ընտրողների մասնակցության խթանման, ԿԸՀ կայքից օգտվելու, ուսումնական էլեկտրոնային հարթակի, համավարակի ժամանակ քվեարկության անվտանգության և այլ թեմաների վերաբերյալ:

Իրազեկման համար ԿԸՀ-ն օգտագործում է ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից էլեկտրոնային հաղորդակցման միջոցներ: ԿԸՀ-ն ունի հարուստ տեղեկատվությամբ կայք, էլեկտրոնային ուսուցման հարթակ, պաշտոնապես վավերացված Meta (Facebook) օգտահաշիվ, YouTube-յան ալիք:

ԿԸՀ-ն հանձնառու է շարունակել և ավելացնել քաղաքացիական կրթության և իրազեկման ջանքերը՝ ընդլայնելով ներգրավվածությունը դեպի մարզեր և դարձնելով այն ավելի թիրախային:

Ժողովրդավարության վերաբերյալ քաղաքացիական կրթության, հանրային իրազեկման միջոցառումները հիմնականում իրականացվում են ընտրություններին նախորդող ժամանակահատվածում: ԿԸՀ-ն գտնում է, որ պետք է փոխել այդ պրակտիկան և հանրության հետ աշխատանքը դարձնել

ամենօրյա: Հնարավոր չէ մեկ-երկու ամսում հասնել հանրության մեջ ընկալումների էական կամ կտրուկ փոփոխության:

ԿԸՀ-ն նպատակ ունի նաև ուսումնասիրել հանրության տարբեր շերտերի տեղեկացվածության բացը, գիտելիքների պակասը և ձևավորել ծրագրեր՝ այդ բացերը թիրախավորված լրացնելու նպատակով:

ԿԸՀ-ի հանձնառություններից մեկն ընտրական գործընթացի վերաբերյալ լիարժեք իրազեկման կազմակերպումն է: Որպես ձևաչափ՝ ԿԸՀ-ն ընտրել է նաև հանրության հետ տեղեկատվությունը փոդքաստի միջոցով կիսելը:

Վերջին շրջանում փոդքաստները լայն տարածում են գտել և մեծ հնարավորություններ են տալիս հասանելի դարձնել տեղեկատվությունն ավելի լայն շրջանակների՝ ներառելով տարբեր տարիքային խմբեր: Վերոնշյալը հնարավոր է իրականացնել փոդքաստի վարման ազատ ձևաչափի շնորհիվ, որի ընթացքում կարելի է անդրադարձ կատարել ոչ միայն ԿԸՀ կողմից տրամադրվող պաշտոնական տեղեկատվությանը, այլև բացահայտել կառույցն իր հիմնական գործառույթներով, ինչպես նաև բացահայտել այն աշխատակիցներին, ովքեր երկար տարիներ աշխատել են կառույցում և կրում են ինստիտուցիոնալ հիշողություն: Վերջիններիս կարևորությունն անչափ մեծ է, քանի որ հասարակությունն ունի թյուր կարծիք, թե ԿԸՀ-ն աշխատում է ընտրությունից ընտրություն: Փոդքաստի միջոցով հանրությունը հնարավորություն կունենա ավելի մատչելի, ինտերակտիվ ձևաչափով տեղեկատվություն ստանալ ընտրական ողջ շրջափուլի մասին՝ բացահայտելով ընտրական գործընթացի նրբությունները, ինչը իրազեկման կարևորագույն բաղադրիչ մասն է կազմում:

Փոդքաստը հեշտ է ստեղծել և արտադրել: Շատ փոդքաստներ անվճար են լսելու համար, և մարդիկ կարող են դրանք լսել տանը կամ գործողություն կատարելիս: Բացի լսելուց, կա նաև փոդքաստը դիտելու հնարավորությունը: Փոդքաստի ազատ ձևաչափը թույլ է տալիս ունկնդրին միշտ տեղեկացված մնալ ընթացիկ նորությունների և տեղեկատվության մասին: Փոդքաստի դրվագները կարող են զարգանալ՝ հիմնվելով հետադարձ կապի վրա: Այս ամենի միջոցով ընտրական համակարգը կներկայացվի ավելի բաց և թափանցիկ ձևաչափով՝ հնարավորություն տալով ունկնդիրներին տվյալ պահին ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

3.6 «Ժողովրդավարություն և ընտրություններ» կրթական ծրագիր

Քաղաքացիական կրթությունն առանցքային է գրագետ և իրազեկ քաղաքացի դաստիարակելու համար: Քաղաքացիական կրթության միջոցով անհատները յուրացնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները, դառնում իրազեկ որոշումներ կայացնող հասարակության ակտիվ անդամ: Քաղաքացիական կրթության միջոցով ամրապնդվում են ժողովրդավարական արժեքները, օրենքի

գերակայությունը, հանդուրժողականությունը, խոսքի ազատությունը, տարա-կարծության ընդունումը:

Հանրակրթական դպրոցում 9-րդ դասարանից սկսած դասավանդվում է հասարակագիտություն առարկան: Ֆորմալ կրթական ծրագրից զատ, մի շարք այլ կազմակերպություններ (օրինակ՝ Փրոջեքթ Հարմոնի, Վորլդ Վիժն, Հայաստանի երիտասարդ քաղաքացիներ ՀԿ-ն և այլք) զանազան թիրախային խմբերի համար առաջարկում են տարբեր բովանդակությամբ և ծավալներով քաղաքացիական կրթության դասընթացներ: ՄԱԶԾ-ն 2021 թվականի ԱԺ արտահերթ ընտրություններից առաջ ԿԸՀ-ի միջոցով անցկացրեց «Ընտրական դպրոց» անվանմամբ դասընթացներ:

ԿԸՀ-ն համոզված է, որ, հաշվի առնելով արդեն իսկ գոյություն ունեցող տարատեսակ դասընթացները և դասավանդման նյութերը, այնուամենայնիվ, անհրաժեշտություն կա ընտրական գործընթացների հետ կապված նոր մոդուլի մշակման և լայնամասշտաբ իրագործման համար:

Այս նախաձեռնությունը կարելի է կոչել «Ժողովրդավարություն և ընտրություններ» կրթական ծրագիր, որի նպատակն է ինտերակտիվ և երիտասարդության համար հետաքրքրական մեթոդներով լսարանին ներգրավել արդի հանգամանքների համատեքստում անցկացվող ընտրությունների վերաբերյալ գիտելիքների և հմտությունների յուրացման գործընթացում: Կրթական ծրագիրը լինելու է սեղմ, բայց բովանդակությամբ հագեցած: Շահառուները ստանալու են ինչպես անմիջականորեն ընտրական գործընթացներին վերաբերող գիտելիքներ, այնպես էլ՝ զարգացնելու են հմտություններ՝ ապատեղեկատվությունը բացահայտելու, կարծիքը և կեղծիքը տարբերելու համար:

Ծրագրի իրականացման համար ԿԸՀ-ն ներգրավելու է ինչպես սեփական ռեսուրսները, այդ թվում՝ մարզային ուսումնական կենտրոնները, այնպես էլ՝ գործընկեր կազմակերպություններին և անհատների, որոնք կանցնեն վերապատ-րաստման համապատասխան դասընթաց և կորակավորվեն որպես «Ժողովրդա-վարություն և ընտրություններ» կրթական ծրագրի դասընթացավարներ:

4. Քվեարկության կատարելագործում

4.1 Նոր նույնականացման քարտերի ներդրման գործընթաց

ԸՕ 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ են համարվում նույնականացման քարտը, կենսաչափական անձնագիրը, ոչ կենսաչափական անձնագիրը, անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից, ...»: Կան ընտրողներ՝ զինվորականներ,

անազատության մեջ գտնվողներ, ՏԻՄ ընտրությունների ժամանակ ՀՀ քաղաքացիություն չունեցողներ, որոնք այլ փաստաթղթերով են մասնակցում քվեարկությանը:

Կառավարությունը որդեգրել է ամբողջական կենսաչափական տվյալների համակարգի անցման քաղաքականություն: Հաշվի առնելով, որ ընտրողների ցուցակների և ընտրողների նույնականացման գործընթացի հետ կապված հարցերն ուղղակիորեն կապվում են բնակչության պետական ռեգիստրի, քաղաքացու անձը հաստատող փաստաթղթերի տեղեկատվական շտեմարանների հետ, կարևոր է, որ ԿԸՀ-ն ուշադրության ներքո պահի տեղի ունեցող գործընթացները, տիրապետի տեղեկատվությանը, որպեսզի պատրաստ լինի հնարավոր փոփոխություններին և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկի համապատասխան փոփոխություններ ընտրական գործընթացներում: Այս առումով ժամանակին համընթաց լուծումներ առաջարկելու համար, կարևոր է նաև մշտապես ուսումնասիրել միջազգային փորձը և նորամուծությունները:

ԿԸՀ-ն մասնակցում է ամբողջական կենսաչափական համակարգի ներդրման գործընթացի քննարկումներին և հանձնառու է շարունակելու իր մասնակցությունը գործընթացներին, կիսվելու իր փորձով և պատկերացումներով նոր ներդրվող համակարգն առավելագույնս արդյունավետ կառուցելու և ընտրական գործընթացներում նոր հնարավորությունները կիրառելու համար:

Ունեցած փորձի, ինչպես նաև գործընկերների հետ հանդիպումների արդյունքում, ձևավորվել է մոտեցում, որ հնարավորության դեպքում ընտրողի համար մեկ միասնական փաստաթղթի կիրառումը լավագույն լուծումն է, եթե անգամ հնարավոր չէ դա կիրառել բոլոր ընտրողների դեպքում, այնուամենայնիվ, նպատակահարմար է որպես առաջին քայլ, ՀՀ քաղաքացի հանդիսացող ընտրողների համար ունենալ քվեարկության մեկ միասնական փաստաթուղթ: Ընտրական գործընթացում ընտրողի անձը հաստատող փաստաթղթերին վերաբերելի իրավակարգավորումները փոխելու, դրանց գործարկման հետ կապված գործառույթների ու համակարգերի համապատասխանեցումը ճիշտ ժամանակին և պատշաճ պլանավորելու և իրականացնելու համար՝ շատ կարևոր է նաև իրական ժամկետների մասին տեղեկատվությունը:

Լավագույն լուծումներ գտնելու համար ԿԸՀ-ն պատրաստակամ է նաև անհրաժեշտության դեպքում, օգտվել ԸՕ 51-րդ հոդվածի 5-րդ մասով տրված լիազորությունից, իրականացնել փորձարարական ծրագրեր (Տես 4. 3 Փորձարարական ծրագրեր):

4. 2 Տեխնիկական սարքավորումների վերազինում

2016 թվականին ընդունված ԸՕ-ով քվեարկության գործընթաց ներմուծվեց ՏԸՀ-ներում ընտրողների գրանցումը տեխնիկական սարքավորման միջոցով իրականացնելու ընթացակարգը:

ԿԸՀ-ն, կառավարության և միջազգային գործընկերների հետ համատեղ, ձեռնամուխ եղավ ընտրողի նույնականացման նոր համակարգի ներդրմանը: 2016 թվականին ՄԱԶԾ (UNDP) ընտրական գործընթացների աջակցության ծրագրի շրջանակներում հայտարարվեց միջազգային գնման մրցույթ և որպես ընտրողների նույնականացման/գրանցման տեխնիկական սարքավորումներ (այսուհետ՝ ԸՆՍ) արտադրող և ծրագրային միջոցի սպասարկող մատակարար ընկերություն ընտրվեց «Smartmatic»-ը:

ԸՆՍ-ների առաջին փորձնական կիրառումը տեղի ունեցավ 2017 թվականի փետրվարի 12-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկա և Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքներում, որի ժամանակ վեր հանվեցին թերությունները և իրականացվեց ծրագրային ապահովման լրամշակում ու ի հայտ եկած թերությունների վերացում:

ԸՆՍ-ները Հայաստանում առաջին անգամ կիրառվեցին 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ և գործարկվեցին ամբողջ հանրապետությունում և մինչ օրս հաջողությամբ գործածվում են ՀՀ-ում անցկացվող բոլոր ընտրությունների ժամանակ:

2017 թվականի խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ գույքագրված թերությունների վերացման նպատակով՝ իրականացվեց ծրագրային ապահովման լրամշակում, ինչպես նաև՝ հավելյալ փոփոխություններ:

Բացառությամբ շրջիկ արկղով, էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում քվեարկությանը մասնակցող ընտրողների՝ բոլոր ընտրողների համար գործում է ընտրողի նույնականացման/գրանցման այս համակարգը:

Սարքավորումներն արտադրվել են 2016 թվականին, և չնայած նրան, որ դրանք օգտագործվել և պահպանվել են խնամքով ու արտաքինից ունեն լավ պահպանված տեսք, սակայն իրականում նրանք տեխնիկապես և բարոյապես հին են և ռիսկային՝ ամբողջական (համապետական ընտրություններին) կիրառելու համար: Սարքավորումների մեծ մասի մարտկոցները գտնվում են օգտագործման թույլատրելիության եզրային գծի վրա, սարքավորման մեջ ներդրված ծրագրային միջոցը հին է, և դրա թարմացումը հնարավոր է խնդիրներ առաջացնի: ԿԸՀ-ն գործող մատակարարի հետ քննարկել է առկա սարքավորումների տեխնիկական և ծրագրային վերազինման հարցը:

ԿԸՀ-ն նպատակ ունի մինչև 2026 թվականի Աժ հերթական ընտրություններն իրականացնել սարքավորումների թարմացման գործընթաց: Այս

կապակցությամբ ԿԸՀ-ն կարևորում է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրումը: Այլ երկրներում ներդրված սարքավորումների, կուտակված փորձի, սեփական փորձի, ինչպես նաև լոկալ առանձնահատկությունների հաշվառմամբ, այդ թվում՝ ՀՀ-ում տեղի ունեցող կենսաչափական նոր համակարգի ներդրման համատեքստում, կարևոր է գտնել առավել արդյունավետ և օպտիմալ լուծումներ (տես նաև 4. 1 Նոր նույնականացման քարտերի ներդրման գործընթաց): Նշված փաստարկներով պայմանավորված՝ արդեն իսկ առկա են որոշակի պատկերացումներ, օրինակ՝ նոր սարքավորումներն ի տարբերություն գործողի պետք է ունենան նաև նույնականացման քարտերն ընթերցող սարքավորում (chip reader), ինչպես նաև տեսախցիկներ: Առկա են նաև որոշակի հարցեր, որոնց պատասխանները պետք է դեռ քննարկել: ԿԸՀ-ն անհրաժեշտության դեպքում կարող է նաև ՏԻՄ ընտրություններում իրականացնել փորձարարական ծրագրեր՝ կիրառելով հնարավոր նոր սարքավորումներ և ծրագրային միջոցներ:

Այդ օրենսդրական փոփոխությունները Հայաստանի համար ունեն կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ նշաձող է սահմանված, ընտրությունները հասցնել նոր և ավելի բարձր մակարդակի:

4.3 Փորձարարական ծրագրեր

Ընտրական գործընթացներում շարունակաբար լայն տարածում են ստանում նոր տեխնոլոգիաները: Գործող / առկա տեխնիկական սարքավորումները կարող են համալրվել կենսաչափական նույնականացման հավելյալ սարքերով: Որպես պիլոտային ծրագիր կարելի է դիտարկել որևէ համայնքում նոր տեսակի անձը հաստատող փաստաթղթի համատարած ներդրումը և կիրառել գրանցման պահին ընտրողի կենսաչափական նույնականացում: Հաջորդ ԱԺ ընտրութ-յուններին ընդառաջ ցանկալի է իրականացնել տեխնիկական սարքավորումների տարբեր մոդելների փորձարկում՝ առանձին ՏԻՄ ընտրություններում:

Անցած ընտրությունների փորձը և դիտարկումները ցույց են տալիս, որ տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություններում դեռևս բավականին հաճախ են հանդիպում սխալներ և վրիպակներ: Այդ վրիպակներից խուսափելու կամ նվազագույնի հասցնելու համար կարելի է օգտագործել հեռախոսային հավելված, որը հնարավորություն կտա ստուգել տրամաբանական և թվաբանական սխալները: Ընդ որում, այդպիսի հավելվածը կարող է օգտագործվել ոչ միայն ՏԸՀ անդամների կողմից, այլ նաև կիրառվել որպես զուգահեռ ստուգման գործիք՝ քվեարկության օրը տեղամասային կենտրոնում գտնվող վստահված անձանց, դիտորդների, այցելուների և ՁԼՄ ներկայացուցիչների կողմից:

4.4 Մատչելիության բարելավում

Վերջին տարիներին, Հայաստանում զգալի առաջընթաց է գրանցվել հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական մասնակցության ոլորտում՝ բազմակողմ մոտեցում ցուցաբերելով շրջակա միջավայրի, ծառայությունների և տեղեկատվության ընդհանուր հասանելիությանը, որոնց հետ առնչվում են հաշմանդամություն ունեցող անձինք:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, համագործակցելով ՀՈՒԱ-ի հետ, մշակել է հատուկ քաղաքականություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության բարձրացման և իրավունքների պաշտպանության բարելավման ուղղությամբ: Մշակվել և ներդրվել են ընտրական գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց հասանելիությունն ապահովելու մի շարք գործիքներ, որոնց առկայությամբ՝ հաշմանդամության տարբեր խնդիրներ ունեցող անձինք հնարավորություն են ունեցել ինքնուրույն իրացնել իրենց ընտրական իրավունքը:

ԿԸՀ-ի հիմնական շեշտադրումն է եղել ապահովել տեղամասային կենտրոնների մատչելիությունը, մատչելի տպագիր և էլեկտրոնային տեղեկատվական/ իրազեկման նյութերի պատրաստումն ու տարածումը, մատչելի քվեարկության գործիքների ներդրումը. ԿԸՀ կայքի մատչելի ձևաչափի, ժեստերի լեզվի, ՏԵՔՍՏԻՑ - ԽՈՍՔ համակարգի, աուդիո նյութերի, խոշոր տառաչափի քվեաթերթիկների և տպագիր նյութերի, ինչպես նաև քվեաթերթիկների բրայլյան տպագրությամբ կաղապարների և մի շարք այլ գործիքների առկայությամբ հնարավոր է եղել առաջընթաց գրանցել մատչելի ընտրություններ անցկացնելու քաղաքականության մեջ՝ հաղթահարելով բազմաթիվ կարծրատիպեր և թյուրընկալումներ, որոնք վերաբերում են ՀՈՒԱ-ին:

Տեխնոլոգիական վերազինման գործընթացին զուգընթաց՝ ԿԸՀ-ն մտադիր է դիտարկել քվեարկությունն ավելի մատչելի դարձնելու նոր լուծումներ:

4.5 «Կանաչ ընտրություններ-Կանաչ քվեարկություն»

Ընտրությունները երկրում կազմակերպվող և անցկացվող լայնամասշտաբ իրադարձություններից են, որոնց կազմակերպման համար ներդրվում և ծախսվում են հսկայական նյութական, ֆինանսական ռեսուրսներ:

Այս պահի դրությամբ առկա չէ որևէ հետազոտություն կամ վերլուծություն՝ ընտրությունների կազմակերպման համար օգտագործված նյութերի արդյունքում շրջակա միջավայրին հասցված վնասների վտանգավորության աստիճանի վերաբերյալ: Հայաստանում ընտրությունների ընթացքում ընտրական փաստաթղթերի և այլ պարագաների համար օգտագործվում է բավականին շատ թուղթ (2021 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ

քվեաթերթիկների տպագրության համար օգտագործվել է մոտ 70 տոննա թուղթ), մինչդեռ «Կանաչ ընտրությունների-կանաչ քվեարկության» ներդրման արդյունքում հնարավոր կլինի նվազագույնի հասցնել ընտրությունների ընթացքում օգտագործվող թղթի ծավալները և նվազագույնի հասցնել վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: «Կանաչ ընտրությունների-կանաչ քվեարկության» ներդրումը էական նշանակություն կունենա Հայաստանի համար քանզի բնապահպանական խնդիրների ազդեցությունը բավականին մեծ է, և այսօր պետք է գնահատել այդ մարտահրավերների լրջությունը:

Միանշանակ է, որ նման հայեցակարգային փոփոխության համար անհրաժեշտ է ընտրական վարչարարության նոր գործիքների ներդրում, օրենսդրական փոփոխություններ, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրություն:

Ընտրությունների կազմակերպման և ընտրական հանձնաժողովների առօրյա գործունեության համար որպես էլեկտրաէներգիայի այլընտրանք՝ կարելի է դիտարկել վերականգնվող էներգիան, որը ստացվում է բնական ռեսուրսներից (արևի լույս, քամի և այլն) և բնականաբար վերականգնվում է բնական ճանապարհով:

Ընտրական գործընթացներում որոշակի գործառույթներ արդեն իսկ իրականացվում են էլեկտրոնային եղանակով: Հարկ է նկատել, որ էլեկտրոնային համակարգերի և հարթակների միջոցով իրականացվող ընտրական գործընթացները պետք է բավարարեն իրավական և տեխնիկական սահմանված չափանիշներին:

Ընտրական գործընթացների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և ռազմավարական պլանավորման գործընթացներում դրա ինտեգրումը ժամանակի ընթացքում կտա կլիմայական ճգնաժամերի դեմ պայքարի նոր ուղղություն ընտրական հանձնաժողովների համար:

Կարևորելով էկոլոգիական բացասական հետևանքների նվազեցումն ընտրական համակարգում՝ ԿԸՀ-ն հետապնդում է հետևյալ նպատակները՝

- շրջակա միջավայրի բացասական հետևանքների նվազեցման նպատակով՝ հավաքագրել և գնահատել օգտագործվող ցանկացած էկոլոգիապես գիտակցված քաղաքականություն,
- մշակել բնապահպանական նվազագույն վնասակար ազդեցություն ունեցող գործողությունների քարտեզ՝ երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցության գնահատմամբ,
- պլանավորել քաղաքականություն՝ գնումների գործընթացների, ֆինանսավորման, ինֆորմացիոն և հաղորդակցության տեխնոլոգիաների, լոգիստիկայի (տրանսպորտ), ընտրողների կրթության, քվեարկության տպագիր նյութերի, սարքավորումների և ապրանքների, գրասենյակային տարածքների և պահեստավորման վերաբերյալ,

- իրականացնել ներքին գնահատում՝ ժամանակի ընթացքում շրջակա միջավայրի վրա հետևանքների նվազեցման աճին հետևելու համար:

5. Ընտրական անվտանգություն

5.1 Կիբեռանվտանգություն

Ողջ աշխարհում նկատվում է ընտրական գործընթացների թիրախավորման աճ: Թեև կարճաժամկետ նպատակները կարող են տարբեր լինել, երկարաժամկետ նպատակը ժողովրդավարական հասարակությունների հիմքերը խարխլելն է լայն հանրության շրջանում՝ սերմանելով անվստահություն ընտրությունների անաչառության և ընդհանրապես ժողովրդավարական գործընթացների նկատմամբ:

Կիբեռսպառնալիքների արագ փոփոխվող միջավայրը պահանջում է, որ պետական կառավարման և ընտրական մարմինները մշտապես հետևեն ոլորտային զարգացումներին, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնեն նոր զարգացող տեխնոլոգիաներին: Մինչ կիբեռսպառնալիքները զարգանում և դառնում են ավելի բարդ, դրանք կանխելու ու հաջող ներթափանցումից հետո վերականգնվելու համար, ընտրությունների անաչառության պաշտպանությունը ենթադրում և պահանջում է համապարփակ մոտեցում: Լավագույն փորձը ցույց է տալիս, որ ընտրությունների պաշտպանությունը կիբեռսպառնալիքներից և ապատեղեկատվական արշավներից ներառում է ընտրական կառավարման մարմինների և կիբեռանվտանգության քաղաքականության ու իրականացման համար պատասխանատու այլ պետական և մասնավոր հաստատությունների կարողությունների մեկտեղում՝ միևնույն ժամանակ ապահովելով միջգերատեսչական ակտիվ համագործակցություն:

Սույն ռազմավարության նպատակն է ներկայացնել և իրականացնել ԿԸՀ-ի կիբեռանվտանգության կարողությունների ճկունությունը բարձրացնելուն միտված համապարփակ միջոցառումներ՝ ապահովելով ընտրական գործընթացների նկատմամբ վստահություն:

Ընդհանուր առմամբ՝ ընտրական գործընթացը բաժանվում է չորս հիմնական փուլերի՝ նախապատրաստական, քարոզարշավի, քվեարկության և հետընտրական շրջանների: Այս ժամանակահատվածները փոխկապակցված են, և մեկ ցիկլի ընթացքում կիբեռհարձակումների վտանգը կարող է ունենալ կողմնակի ազդեցություն:

Հետևաբար, ընտրությունների կիբեռանվտանգության, կիբեռհիգիենայի և կիբեռվարքագծի պատրաստվածության ուսումնասիրությունն ու իրականացումը չի կարող սահմանափակվել միայն ընտրությունների կառավարման մարմնի ՏՀՏ ենթակառուցվածքով՝ ներառելով բոլոր փուլերը և ներգրավված

դերակատարներին: Եվրոպական միության կիբեռանվտանգության գործակալության (ENISA) կողմից հավաքված տեղեկատվության և ուսումնասիրությունների համաձայն՝ կիբեռանվտանգության, ինչպես նաև ապատեղեկատվության տարածման ռիսկի ամենաբարձր մակարդակները կան և կարող են ակնկալվել քաղաքական քարոզարշավի շրջափուլում:

Բացի վերոգրյալից՝ կիբեռգործողությունները և ապատեղեկատվական արշավները հաճախ նախորդում, հաջորդում, ուղեկցում և ուժեղացնում են միմյանց: ԿԸՀ-ն կիբեռպաշտպանվածության ծրագրերի մշակման ժամանակ մեծ ուշադրություն է դարձնում ընդհանուր խոչընդոտներին դիմակայելուն, ինպես նաև նախկին միջադեպերի ուսումնասիրության հիման վրա մշակվում են նոր նախագծեր՝ առավել պատրաստված լինելու համար, քանի որ կիբեռհարձակումները կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն թիրախավորել ընտրական ենթակառուցվածքը՝ վերը նշված նպատակներից որևէ մեկին հասնելու համար: Ընտրական ենթակառուցվածքը չի սահմանափակվում միայն ընտրական մարմինների ՏՀՏ-ներով, ընտրողների գրանցման, քվեարկության, կուսակցությունների և ընտրական գործընթացներում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի ՏՀՏ-ներով:

ԿԸՀ համապատասխան ստորաբաժանումն իր բոլոր նախագծերում մշտադիտարկել և զարգացրել է ԿԸՀ ենթակառուցվածքների աշխատանքների անընդհատության ապահովումը, տեղեկատվության ամբողջականությունը, պահպանումը, պահուստային պատճենների ստացումն ու վերականգնումը: Հաշվի առնելով բնական աղետները, կիբեռհարձակումները և այլ խոչընդոտները՝ մշակվել և ներդրվել է պահուստային պատճենների բազմաստիճան համակարգ: Դեռևս 2012 թվականից տեղեկատվության պահպանման և վերականգնման համակարգի շնորհիվ՝ բացառելով տեղեկատվության կորուստը: 2023 թվականին վերազինվել են այդ ենթակառուցվածքի տեխնիկական մասերը: Ներդրվել է խոցելի բլոկներից ևս մեկի փոխարինման համակարգ:

ՀՀ-ում Ազգային անվտանգության կողմից պարբերաբար կատարվում է վերահսկողություն՝ կիբեռհարձակումների նկատմամբ: Ավելին՝ ԿԸՀ ՏՏ և ՏՎ վարչության և ԱԱԾ-ի միջև գոյություն ունի փոխկապակցված համագործակցություն, որն առկա է թե՛ ընտրությունների ժամանակ, և թե՛ ամենօրյա աշխատանքում:

Տարբեր կիբեռհարձակումներից խուսափելու համար ԿԸՀ ՏՏ և ՏՎ վարչությունը մեծ ուշադրություն է դարձնում աշխատակիցների կիբեռվարքագծի զարգացման, կիբեռհիգիենայի կանոններին հետևողական լինելու վրա: Ինչքան էլ ՏՏ և ՏՎ վարչությունը ծրագրատեխնիկական միջոցներով կատարում է կիբեռանվտանգության կանոնակարգերի մշակումը և ներդրումը, միևնույնն է

աշխատակիցների և շահագրգիռ կողմերի հետ ամենօրյա աշխատանքներ են տարվում կիբեռվարքագծի զարգացման համար:

Կիբեռսպառնալիքների և ապատեղեկատվության իրազեկման ջանքերը պետք է ընդգրկեն բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերը և չպետք է սահմանափակվեն միայն ընտրական մարմիններով: Լավագույն փորձը ցույց է տալիս, որ թիրախային լսարանը պետք է լինեն ընտրությունների կառավարման մարմիններում աշխատող պաշտոնյաները, ընտրական ՏՏ ենթակառուցվածքների համար պատասխանատու մատակարար ընկերությունները, նրանց աշխատակիցները, զանգվածային լրատվության միջոցները, հասարակական կազմակերպությունները և կուսակցությունները: Հաշվի առնելով իրազեկման արշավների լայն շրջանակը՝ դրանք չպետք է պատվիրակվեն միայն ընտրական մարմիններին, այլ պետք է ներառեն պետական մարմիններ, որոնք պատասխանատու են կիբեռ և հիբրիդային սպառնալիքների, ինչպես նաև ռազմավարական հաղորդակցության համար:

Ժողովրդավարական ընտրությունները ենթադրում են, որ բոլոր թեկնածուներն ու կուսակցությունները պետք է ունենան հավասար և արդար հնարավորություններ նախընտրական քարոզչություն իրականացնելու խոչընդոտներից և մանիպուլյացիաներից զերծ պայմաններում: Այնուամենայնիվ, բարձր ռիսկի տակ գտնվող անձի կամ կուսակցությունների վրա կիբեռհարձակումը և ապատեղեկատվությունը կարող է կասկածի տակ դնել ընտրությունների արդյունքները՝ որպես ամբողջություն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դերը չպետք է սահմանափակվի միայն ընտրական ցիկլի ընթացքում իրազեկվածության բարձրացմամբ, այլ նաև պետք է տարածվի մասնակից քաղաքական կազմակերպություններին աջակցելու վրա: Նախընտրական քարոզարշավի մեջ մտնող կուսակցությունները կարող են և կունենան կիբեռանվտանգության հասունության տարբեր մակարդակներ: Նոր և պակաս ֆինանսավորում ունեցող կուսակցություններն ու թեկնածուներն ավելի խոցելի կլինեն կիբեռհարձակումների նկատմամբ: Հետևաբար, կուսակցություններին աջակցելու ԿԸՀ ջանքերը գնալով ավելի հրատապ են դառնում՝ ապահովելու, որ քարոզարշավի ժամանակահատվածը զերծ լինի կիբեռսպառնալիքներից: Այնուամենայնիվ, կան որոշ վերապահումներ՝ քաղաքական չեզոքություն, նրբանկատություն և վստահության խնդիրներ կուսակցությունների և ԿԸՀ միջև, որոնց պատճառով առաջինները կարող են չդիմել ԿԸՀ՝ աջակցություն ստանալու համար: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է ներդնել հանրային իրազեկման և վստահության ամրապնդման ընթացակարգ:

ԿԸՀ-ն յուրաքանչյուր տարի մշակում և արդիականացնում է կիբեռանվտանգության պլանավորումը, գնահատումը, զարգացումը և ներդրումը:

Ստորև ներկայացվում են այն հիմնախնդիրները, որոնք իրականացվել և իրականացվում են ԿԸՀ կողմից և որոնք գտնվում են մշտական զարգացման և բարեփոխումների փուլում՝

- ✓ միջազգային ստանդարտներին համապատասխան սերվերային սենյակ,
- ✓ ներքին (լոկալ) ցանց ԿԸՀ և ԸԸՀ միջև,
- ✓ ԿԸՀ վարչական շենքի լոկալ ցանց, ցանցային սարքավորումներ և ցանցի անվտանգություն,
- ✓ ԿԸՀ համացանցային կայքի պարբերաբար արդիականացում,
- ✓ ԿԸՀ հոստինգով էլեկտրոնային փոստ,
- ✓ ԿԸՀ ցանցերում ներքին հաղորդակցման միջոցներ (չաթ) և տեսակապի միջոցներ,
- ✓ ընտրական գործընթացների և գործառույթների իրականացման համար ավտոմատացված համակարգեր,
- ✓ կիբեռանվտանգության ռազմավարություն,
- ✓ ԿԸՀ և ԸԸՀ տեխնիկական միջոցների վերազինում,
- ✓ ԿԸՀ էլեկտրոնային համակարգերի, ցանցերի, տվյալների պահոցների, աշխատակիցների ինֆորմացիայի անվտանգության ռազմավարություն,
- ✓ տեղեկատվության, սերվերների կարգաբերումների, տվյալների բազաների, ԿԸՀ վարչական շենքի աշխատակիցների տեղեկատվության պահուստային պատճենների պահպանման համակարգ,
- ✓ ԿԸՀ վարչական շենքի աուդիո համակարգեր, և՛ ԿԸՀ, և՛ ԸԸՀ նիստերի ուղիղ հեռարձակում,
- ✓ ԿԸՀ վարչական շենքում անլար ցանցային ծածկույթ,
- ✓ համապետական ընտրությունների ժամանակ հեռուստաընկերություններին ինտերնետային առանձնացված կապուղիներով և հոսանքի գծերով ապահովելու միջոցներ,
- ✓ համացանցը, ԿԸՀ-ԸԸՀ ներքին (լոկալ) ցանցը, հոսանքի աղբյուրները սպասարկող կազմակերպությունների հետ ընտրություններից առաջ աշխատանքային խմբեր ստեղծելու և համագործակցելու քաղաքականություն,
- ✓ այլընտրանքային ինտերնետային կապուղիների քաղաքականություն և համապետական ընտրությունների ժամանակ դրանց ավելացման մեխանիզմներ,
- ✓ հոսանքի այլընտրանքային սնուցման աղբյուրների առկայություն,
- ✓ տեղամասերում քվեարկության ընթացքի տեսագրման համակարգում,
- ✓ ընտրական շրջափուլում իրավիճակային վերլուծության կենտրոնի ստեղծում և սպասարկում
- ✓ տեղամասում ընտրողների նույնականացման գործընթացի կազմակերպում՝ սարքեր ներբեռնվող ընտրողների էլեկտրոնային ցուցակների բազայի

ստեղծում, տեղեկատվության համախմբում, մշտադիտարկում և տվյալների բազայի արխիվացում:

Առաջնորդություն և կազմակերպչական համատեքստ

Հաշվի առնելով ՏՀՏ ի հայտ գալն ու ներթափանցումը հասարակության բոլոր ասպեկտներ՝ ԿԸՀ-ն ևս ձեռնամուխ է եղել վերակազմակերպել իր կառուցվածքը և ստեղծել է ՏՏ և ՏՎ վարչությունը՝ դեռևս 2005թ-ին:

2011 թվականին ԿԸՀ-ն ձեռնամուխ է եղել ձեռք բերել ISO27001:2005 և ISO9001:2008 սերտիֆիկատները՝ անցնելով համապատասխան միջազգային աուդիտ, ստանալով դրանք 3 տարի ժամկետով:

Աուդիտի պահանջներին համապատասխան ԿԸՀ-ն ՏՏ և ՏՎ վարչության կազմում ձևավորվել է համակարգչային ծառայությունների բաժին՝ բարձրացնելով տեղեկատվական տեխնոլոգիաների և կիբեռանվտանգության դերը:

2022 թվականին ԿԸՀ-ն կրկին ձեռնամուխ է եղել ISO սերտիֆիկացմանը: Անցկացվել է ISO27001:2013 համապատասխան աուդիտ ԿԸՀ բոլոր ստորաբաժանումներում: Անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի մշակման փուլում ֆինանսավորման բացակայության պատճառով գործընթացն ավարտին չի հասցվել:

Աուդիտի արդյունքում առաջարկվել է փոխել վարչության բաժնի անվանումն իր գործառույթներին համապատասխան: Համակարգչային ծառայությունների բաժինը վերանվանվել է «Տեղեկատվական անվտանգության ապահովման բաժին»:

Առանցքային կատարման ցուցանիշները (KPI-ները)/ԿԸՀ-ի աշխատակիցների ակնկալիքները օգտագործվում են կիբեռանվտանգության ռիսկերի մշակույթ ստեղծելու համար, որը համապատասխանում է ԿԸՀ ակնկալիքներին:

ԿԸՀ նախագահը պարբերաբար վերահսկում է կիբեռանվտանգության առումով կադրերի կառավարման ռազմավարությունը և ներգրավվածությունը:

ՏՏ և ՏՎ վարչության աշխատակիցների պաշտոնների անձնագրերի և վարչության կանոնադրության համաձայն՝ կիբեռանվտանգության հետ կապված խնդիրները ներկայացվում են ԿԸՀ նախագահին:

Ակտիվների կառավարում

Տեղեկատվական անվտանգության ակտիվների գրանցումը և կառավարումը անհրաժեշտ նախապայմաններից մեկն է ռիսկերի կառավարման պատշաճ ռազմավարության պլանավորման և մշակման համար: Ակտիվների կառավարումը սկսվում է ակտիվների ռեգիստրից, որը թվարկում և նկարագրում է այն ամենը, ինչն արժեք է ներկայացնում ԿԸՀ-ի համար:

Տեղեկատվական գործընթացների իրականացման համար պետք է ձևավորվի անձնակազմ, տեղեկատվական համակարգեր, տվյալների շտեմարաններ, ծրագրային ապահովումներ, տեխնիկական միջոցներ, մշտադիտարկման համակարգեր, փաստաթղթեր, տեղեկատվության պահպանման և մշակման միջոցներ, ինպես նաև տարածք ու օժանդակ ծառայություններ:

Սահմանված են՝

- ✓ տեղեկատվական ակտիվների սեփականատերերը, ում տրված է ծառայողական պատասխանատվություն (պարտականություն) տեղեկատվական այս կամ այն ակտիվի նկատմամբ և ով նախասահմանում է այդ տեղեկատվական ակտիվի նկատմամբ կառուցվածքային այլ ստորաբաժանումների և/կամ օգտագործողների իրավասությունները,
- ✓ տեղեկատվական ակտիվի օգտագործողները, ովքեր տեղեկատվական ակտիվի օգտագործման նկատմամբ ունեն իրավասություն,
- ✓ **Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը (այսուհետև ՏԱԿՀ)** - ընդհանուր կառավարման համակարգի մաս, որը հիմնված է ռիսկերի գնահատման վրա և ստեղծված է տեղեկատվական անվտանգության մեխանիզմների մշակման, ներդրման, գործարկման, մոնիթորինգի, վերանայման, պահպանման և բարելավման նպատակով,
- ✓ ՏԱԿՀ կառավարիչը – տեղեկատվական անվտանգության բաժնի պետ:

Տեղեկատվական ակտիվների գույքագրում իրականացնելիս գործում են հետևյալ պահանջները՝

- ✓ ակտիվները հաշվառել Ակտիվ-Սեփականատեր սկզբունքով,
- ✓ ակտիվները առնվազն տարին մեկ անգամ գույքագրել, փաստաթղթավորել և հանձնել Ֆինանսատնտեսական վարչություն,
- ✓ ակտիվների հաշվառման և գույքագրման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ, որը պատասխանատու է Ակտիվների գույքագրման, ինչպես նաև Ակտիվի սեփականտիրոջ հետ մեկտեղ Ակտիվի դասակարգման և արժևորման համար,
- ✓ ՏՏ ակտիվների սեփականատերերին և օգտագործողներին տրամադրել ուսուցում՝ բարելավելու իրենց դերի ըմբռնումը, ներգրավվածությունն ու պատասխանատվությունը:

Հասանելիության կառավարում

Հասանելիության կառավարումը վերաբերում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ ոչ ֆիզիկական հասանելիությանը ՏՀՏ համակարգերին: Հասանելիության վերահսկման կանոնները, իրավունքները և սահմանափակումները սահմանվում են հատուկ օգտագործողների համար՝ համաձայն ԿԸՀ գործնական կարիքների և հասանելիության վերահսկման քաղաքականության:

Մշակվել և ներդրվել է գաղտնաբառի օգտագործման քաղաքականություն և ԿԸՀ տեղեկատվական համակարգերի մուտքի հասանելիության քաղաքականություն: Մուտքի վերահսկման գործընթացը ֆորմալացված է: Անհրաժեշտության դեպքում օգտագործողի նույնականացումը վերահսկվում և զեկուցվում է: ԿԸՀ ցանցի հեռահար մուտքը վերահսկվում է (մատյանները պահպանվում են): Կատարվում է արտոնյալ իրավունքներով կատարված գործողությունների վերլուծություն՝ առնվազն միջադեպերի դեպքում:

Պարբերաբար վերանայվում են հասանելիության իրավունքները՝ առաջնորդվելով ԸՕ պահանջներով, ԿԸՀ նախագահի հանձնարարականներով և համաձայնությամբ:

ԿԸՀ բոլոր օգտատերերը ստուգվում և վերահսկվում են ինչպես ավտոմատ համակարգով, որը մշտադիտարկվում է պատասխանատուի կողմից, այնպես էլ անհատական մոտեցմամբ:

Հասանելիության անվտանգությունը բարձրացնելու նպատակով նախատես-վում է կիրառել լրացուցիչ նույնականացում կարևոր տեղեկատվական ռեսուրս-ների համար: Նաև, նկատի ունենալով «ԵՍ ԵՄ» նույնականացման հարթակի կիրարկումը, նախատեսվում է ԿԸՀ գործող համակարգերում ինտեգրել նույնականացման այդ մեխանիզմները և մշակել կարգ՝ տեղեկատվական համակարգերի և օգտատերերի հասանելիության կառավարման մասին, որի առկայությունը նաև անհրաժեշտ է ISO27001 սերտիֆիկացման համար:

Կիբեռանվտանգային մշակույթ

Կենսական նշանակություն ունի ԿԸՀ-ի կարիքները և նպատակները սպասարկող կիբեռանվտանգության, կիբեռհիգիենայի և կիբեռվարքագծի մշակույթի զարգացումը և հետագա պահպանումը: Կիբեռանվտանգության մշակույթը ներառում է իրազեկվածության բարձրացում, ինչպես նաև կրթության և վերապատրաստման ենթաբաղադրիչներ:

Կիբեռանվտանգության պատասխանատուները մշտադիտարկումների արդյունքում պարբերաբար ուսումնասիրում և իրականացնում են նոր նախագծեր, կատարում են կարիքների գնահատում՝ դրանք ներկայացնելով ԿԸՀ նախագահին:

Նոր աշխատակիցներին տեղում տրամադրվում է կիբեռանվտանգության մշակույթի վերաբերյալ տեղեկատվություն, և նրանք ծանոթանում են տեղեկատվության հետ աշխատելու հիմնական կանոններին:

Յուրաքանչյուր աշխատակցի կիբեռվարքագծից է կախված ԿԸՀ ներքին և արտաքին ենթակառուցվածքների կիբեռանվտանգությունը, տեղեկատվական համակարգերի անվտանգությունը: Յուրաքանչյուր աշխատակից ունի իր կարևոր տեղը և դերը կիբեռանվտանգության պատասխանատվության մեջ:

Չնայած այն հանգամանքին, որ ԿԸՀ անվտանգության համակարգերի միջոցով սահմանվում, մշտադիտարկվում և վերահսկվում է տեղեկատվական ակտիվներից օգտվելը, միևնույն է օգտատերերի պարբերաբար իրազեկումը, ուսուցումը և կիբեռվարքագծի կանոնների պարբերաբար հիշեցումը պետք է վերածվի կիբեռանվատանգության մշակույթի, որն ավելի կբարձրացնի ներքին և արտաքին կիբեռանվտանգությունը:

ԿԸՀ կիբեռանվտանգության պատասխանատու ծառայության աշխատակիցների համար պետք է անցկացվեն լրացուցիչ սեմինարներ, եթե նրանք տեղյակ են մոտալուտ հարձակումների, ինչպես նաև անցյալ հարձակումների մասին:

Ռիսկերի կառավարում

NIS դիրեկտիվը (2016/1148) անդամ պետություններից պահանջում է ներդնել կիբեռանվտանգության ռիսկերի կառավարման համակարգեր՝ հաշվի առնելով ռիսկի բոլոր գործոնները: Անհրաժեշտ է դիտարկել ցանկացած պոտենցիալ սպառնալիք, որը կիբեռմիջամտությունների արդյունքում կարող է ազդել ՏՀՏ ենթակառուցվածքների վրա: Այս մոտեցումը օգտագործվում է նաև ISO27001 ստանդարտում: Ցանկացած ռիսկ գնահատելիս ընտրական մարմինները պետք է հաշվի առնեն կիբեռհարձակումները, ՏՀՏ համակարգերում օգտագործվող սարքերի և ծրագրային ապահովման համակարգերի խափանումները, հնարավոր մարդկային սխալները և չնախատեսված հանգամանքները, ինչպիսիք են բնական աղետները, ցանցի և էլեկտրամատակարարման խափանումները:

Ցանկացած խնդրի դեպքում, ԿԸՀ-ի համար կարևորը տեղեկատվության ամբողջականության պահպանումն է: ԿԸՀ տեսլականն է ԿԸՀ ենթակառուցվածքները սպասարկող ծրագրատեխնիկական միջոցների պահուստային պատճենների պահպանումը ԿԸՀ վարչական շենքից դուրս:

Ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում հակաճգնաժամային կառավարմանը՝ ստանդարտ գործառնական ընթացակարգերի, կոնտակտների ցուցակների, կապի միջոցների և արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանների մշակմամբ/թարմացմամբ: ԿԸՀ-ն բազմիցս աշխատում և զարգացնում է հակաճգնաժամային իրավիճակներում ռիսկերի նվազեցումը և բացառումը: ԿԸՀ-ն մշակել և ներդրել է կլաստերի սկզբունքը: Սակայն մշտապես կա զարգացման և բարելավման անհրաժեշտություն, որն ամեն տարի ՏՏ և ՏՎ վարչությունը իր ռազմավարության մեջ նախագծում և ներկայացնում է ԿԸՀ նախագահին: 24/7 ռեժիմով աշխատող սարքավորումները փոխարինվում են յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Բոլոր սարքավորումները ձեռք են բերվում սպասարկման հետ միասին: Բոլոր ծրագրային միջոցները արտոնագրված են: Թարմացումները կատարվում են ավտոմատացված համակարգով:

ԿԸՀ-ի համար կիբեռանվտանգության ռիսկերի կառավարման համակարգի ընդունումն առավել կարևոր նշանակություն ունի: Ռիսկերի գնահատման գործընթացը սկսվում է կազմակերպության ներսում՝ վերջնական նպատակ ունենալով դառնալ ընտրական մարմնի կորպորատիվ մշակույթի մի մաս՝ պատշաճ ընթացակարգերով և անկախ վերահսկողությամբ: Պետք է ներառվի նաև ռիսկերի նվազեցման մեթոդների փորձարկում, ինչպես նաև գործնական պարապմունքներ՝ ճգնաժամային և արտակարգ իրավիճակների գործողություն-ների պլանների կայունության ստուգման համար:

ԿԸՀ-ն ունի տեղեկատվական անվտանգության միջադեպերին ժամանակին արձագանքելու պարտականություններ և ընթացակարգեր: Պատշաճ միջադեպը ներառում է 5 փուլ՝ պլանավորում, հայտնաբերում և հաշվետվություն, գնահատում, արձագանքում և քաղված դասեր: Նախատեսվում է ունենալ նաև քաղված դասերի փաստաթղթավորում: Մշտադիտարկման արդյունքները և կիբեռմիջադեպերը պարբերաբար զեկուցվում են ԿԸՀ նախագահին: Անհրաժեշտության դեպքում ԿԸՀ նախագահի հանձնարարականով ձևավորվում են աշխատանքային և աջակցման խմբեր:

Սահմանված են կիբեռանվտանգության միջադեպերի կառավարման գործընթացի դերերն ու պարտականությունները: Գործում է միջադեպերի արձանագրման համակարգ: Կիբեռանվտանգության հետ կապված միջադեպերը լուծվում են 24/7 ռեժիմով: Նախնական պատճառների և հետևանքների վերլուծություն է կատարվում առաջնահերթ միջադեպերի համար:

- Իրականացվում է ցանցի ներթափանցման անկախ փորձարկում (առնվազն՝ երբեմն որպես առանձին նախագծերի/նախաձեռնությունների մաս): Խոցելիության վերաբերյալ ստեղծվում են հաշվետվություններ, որոնց աշխատանքային ընթացք է տրվում:
- Կիրառվում են կիբեռանվտանգության միջադեպերի կառավարման ավտոմատացված լուծումներ: Կիրառվում է միջադեպերի գրանցման և դրանց հետևելու կենտրոնացված և անհատական համակարգ:
- Մշակվում և պարբերաբար փորձարկվում են ծայրահեղ միջադեպերի արձագանքման պլանները:
- Կիբեռանվտանգության միջադեպերի վերաբերյալ հիմնական շահագրգիռ կողմերի հետ իրազեկման և հաղորդակցման գործընթացը ֆորմալացված է:

Այսպիսով, անհրաժեշտ է զարգացնել միջադեպերի զսպման և ազդեցության մեղմացման ռազմավարություններ տարբեր միջադեպերի համար: Պետք է կիրառվի սպառնալիքների հայտնաբերման և արձագանքման համակարգ (Cyber Threat Intelligence):

5.2 Ապատեղեկատվության դեմ պայքար

Վերջին տասնամյակում լայն տարածում է ստանում ուղղորդվող ապատեղեկատվությունը, որն առանձնապես ակտիվանում է ընտրական շրջափուլերում: Ապատեղեկատվության առաջնային նպատակներից են ինչպես հանրային կարծիքի կամ ընտրությունների արդյունքների վրա ապակողմնորոշող քարոզչությամբ ազդելը, այնպես էլ՝ ընդհանուր առմամբ ընտրական գործընթացների նկատմամբ անվստահություն սերմանելը:

Եթե կեղծ խոսույթները քաղաքական բանավեճում գտնվում են ԿԸՀ գործառույթներից դուրս, ապա բուն ընտրական գործընթացների դեմ ուղղված ապատեղեկատվությունն անմիջապես առնչվում է ԿԸՀ-ին և պետք է արժանանա համապատասխան հակազդեցության կամ ավելին՝ կանխվի նախաձեռնողական քայլերի իրականացմամբ:

Ընտրական համակարգի և ընտրական գործընթացների դեմ ուղղված ապատեղեկատվությանը հակազդելու համար ԿԸՀ-ն պետք է ունենա նախօրոք մշակված քաղաքականություն և գործողությունների ծրագիր: Ընդ որում, այդ քաղաքականությունը և գործողությունները պետք է լինեն ամբողջովին ԿԸՀ-ին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում և չխաթարեն քաղաքացիական և քաղաքական ազատությունները:

Վերոհիշյալ քաղաքականության շրջանակներում ԿԸՀ-ն սահմանում է հետևյալ ռազմավարական խնդիրները՝

- մշակել ներքին և արտաքին ռազմավարական հաղորդակցության քաղաքականությունը կարգավորող փաստաթուղթ՝ հստակ սահմանելով տեղեկատվության շրջանառության փուլերը, տեղեկատվության ստուգման գործիքակազմը, արձագանքման մեթոդները, ապատեղեկատվության կանխատեսման, կանխարգելման եղանակներն ու մեթոդները: Առավել հաճախ հանդիպող և կրկնվող կեղծ խոսույթների և տեղեկատվության գույքագրում՝ ուսումնասիրելով թե՛ Հայաստանում անցկացված ընտրությունների պատմությունը, և թե՛ միջազգային փորձը, մասնավորապես, օտարերկրյա վնասակար ազդեցությունից պաշտպանվելու բնագավառում:
- Ձևավորել Ապատեղեկատվության ներքին արձագանքման թիմ (ԱՆԱԹ), որում ներգրավված կլինեն ԿԸՀ տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչներ՝ ընտրված ընտրական գործընթացներում ամենատարբեր գործառույթ կրող ստորաբաժանումներից: ԱՆԱԹ-ի գործունեության առանձնահատկությունները կարող են սահմանվել՝ ելնելով ռազմավարական հաղորդակցության քաղաքականության առաջնահերթություններից և կարիքներից:
- Համագործակցություն համանման խնդիրներով զբաղվող պետական այլ գերատեսչությունների և/կամ նրանց ստորաբաժանումների հետ՝ հստակեցնելով ԿԸՀ-ին վերաբերող խնդիրների տիրույթը և ձևավորելով

արդյունավետ փոխգործակցության կառուցակարգեր:

- Ապատեղեկատվությունը բացահայտելու և դրան հակազդելու կարողությունների զարգացում՝ ԿԸՀ-ի կամ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող քաղաքացիական կրթության ծրագրերում:
- Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ և, մասնավորապես, փաստերի ստուգման հարթակների, ինչպես նաև փաստահեն լրագրողական համայնքի: Լրագրողների համար առանձին կամ այլ կազմակերպությունների հետ համատեղ վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում:

6. Արտաքին համագործակցություն

6. 1 Միջգերատեսչական համագործակցություն

Ընտրական գործընթացներում միջգերատեսչական համագործակցությունը ներառում է տարբեր պետական գերատեսչությունների հետ գործակցություն՝ իրականացնելու ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հիմնական միջոցառումների կատարումը սահմանված ժամկետներում: Այն իր մեջ ընդգրկում է նաև ընտրական տեղամասերի և տեղամասային կենտրոնների կազմավորման, ընտրողների ցուցակների կազմման, նախընտրական քարոզչության ընթացքում հանրային ռեսուրսներից օգտվելու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված պատասխանատու գերատեսչությունների գործունեության համակարգումը:

Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում միջգերատեսչական համագործակցությունն իրականացվում է ընտրական գործընթացի կազմակերպման բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների, փորձարարական ծրագրերի, տեղեկատվական համակարգերի բարելավման և կատարելագործման շրջանակներում: Այն երաշխավորում և ապահովում է սահմանված ընթացակարգերով և ժամկետներում ընտրությունների և ընտրական գործընթացների կազմակերպումը՝ նվազագույնի հասցնելով ի հայտ եկող մարտահրավերներն ու խնդիրները:

Միջգերատեսչական համագործակցությունն օգնում է լուծել այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են՝

1. օրենսդրական բացերն ու հակասությունները,
2. նյութատեխնիկական ապահովման խնդիրները,
3. գերատեսչությունների միջև հաղորդակցության բացերը:

Համագործակցային մոտեցումները երաշխավորում են ընտրական գործընթացների թափանցիկությունը, քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարության կայացմանը: Այն հաճախ ներառում է տեղեկատվության,

ռեսուրսների և փորձի փոխանակում՝ ընտրական համակարգի ընդհանուր արդյունավետության բարձրացման համար:

2023 թվականի ընթացքում ԿԸՀ-ն կազմակերպել և նախաձեռնել է հանդիպումներ մի շարք գերատեսչությունների ներկայացուցիչների հետ, որի արդյունքում կազմվել է ժամանակացույց յուրաքանչյուր գերատեսչության հետ աշխատանքների կազմակերպման և քննարկվող թեմաների վերաբերյալ: Մասնավորապես՝

- **ՀՀ արդարադատության նախարարության** հետ հստակեցվել է ընտրական օրենսդրության բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների քննարկման ժամանակացույցը՝ հիմք ընդունելով շրջանառության մեջ դրված ԸՕ-ում և այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթը: Ինչպես նաև քննարկվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ՁՊՎ-ներում և քրեակատարողական հիմնարկներում գտնվող ընտրողների ընտրական իրավունքի իրացման հետ կապված հարցեր:

ԿԸՀ-ն ակտիվ ներգրավվածություն ունի ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026թթ. գործողությունների ծրագրով անցկացվող միջոցառումների և ԿԸՀ-ի (համատեղության կարգով) կողմից կատարման ենթակա գործողությունների իրականացմանն ուղղված գործընթացներին: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը երկու գործողություններով՝ ***գործողություն 1.6.*** (Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության առկա գործիքակազմը) և ***գործողություն 1.17.*** (Մեծացնել կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետությունը) ներգրավված է որպես համակատարող մարմին:

- **ՀՀ ներքին գործերի նախարարության** հետ քննարկվել է ընտրողների ռեգիստրի նորացման տեսլականը, ընտրողների ծանուցումն ապահովելուն ուղղված նոր ձևաչափը և դրա իրականացման համար անհրաժեշտ գործողությունների հաջորդականությունը, ընտրողների ցուցակների տրամադրման և հրապարակայնացման հետ կապված հարցերը:

Քննարկվել է նաև ընտրությունների հրապարակայնությունը, թափանցիկությունը, ինչպես նաև ընտրողների իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով ԿԸՀ-ի և ՀՀ ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքերի աշխատանքների կատարելագործման ընթացքը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով տեղեկատվության հասանելիությանը:

Առաջարկվել է առաջիկայում պլանավորել և անցկացնել ընտրական տեղամասերում ծառայություն իրականացնող ոստիկանների վերապատրաստում, ինչպես նաև վերջիններիս համար ուղեցույցների մշակում:

- **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության** հետ քննարկվել են ընտրությունների նախապատրաստական աշխատանքների հետ կապված մի շարք հարցեր՝ որոնց թվում են ԸՕ-ով սահմանված որոշումների կայացման, հրապարակման, ԿԸՀ ներկայացնելու հետ կապված, տեղամասային կենտրոնների գտնվելու վայրերի, ինչպես նաև տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների մատչելիության, կահավորման, հանձնաժողովների անդամների բնականոն աշխատանքային գործունեության ապահովման հետ կապված հարցերը:

Քննարկվել են նաև ընտրությունների պատշաճ կազմակերպման և անցկացման գործընթացներում մարզպետների և համայնքների ղեկավարների իրավասություններին վերաբերող նախապատրաստական և կազմակերպչական գործառույթների մասով ԸՕ-ի պահանջների միատեսակ կիրառումն ապահովելուն ուղղված խնդիրները:

- **ՀՀ արտաքին գործերի նախարարության** հետ քննարկվել է միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների հետ համագործակության տեսլականը:
- **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** հետ քննարկվել են ընտրական իրավունքի և ընտրական գործընթացների վերաբերյալ տեղեկատվության ներառման հարցը հանրակրթական ծրագրերում:
- **ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության** հետ քննարկվել են ընտրությունների ժամանակ ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի տեսանկարահանման և միաժամանակյա համացանցային հեռարձակման հետ կապված հարցերը:
- **ՀՀ դատախազության** հետ քննարկվել են սահմանադրական իրավունքների, մասնավորապես, ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի հետ կապված քրեական վարույթներով համագործակցության հետ կապված հարցեր, ինչպես նաև ԸՕ-ով սահմանված պատգամավորի թեկնածուի նկատմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ քրեական հետապնդում հարուցվելու հետ կապված իրավանորմի կիրարկման կարգի վերաբերյալ:
- **Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի** հետ քննարկվել են ընտրությունների ժամանակահատվածում վերգետնյա, կաբելային և

արբանյակային կապով եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանության հետ կապված հարցերը, ինչպես նաև նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ վերահսկողության գործիքների կատարելագործմանն ուղղված հարցերը:

6. 2 Միջազգային համագործակցություն

ԿԸՀ-ն գիտակցում է միջազգային համագործակցության կարևորությունը՝ ընտրական գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու և ժողովրդավարական արժեքները խթանելու գործում: ԿԸՀ կողմից միջազգային հարաբերությունների և համագործակցության խթանման ոլորտներն են՝

Փորձի և գիտելիքների փոխանակում. ԿԸՀ-ն շարունակում է գործընկերություն և համագործակցություն հաստատել այլ երկրների ընտրական մարմինների հետ՝ ընտրությունների վարչարարության ոլորտում տեղեկատվության, գիտելիքների, լավագույն փորձի ուսումնասիրման և փոխանակման նպատակով: Այս նպատակով ԿԸՀ-ն կազմակերպում է ուսումնական այցեր այլ երկրներ՝ լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով: ԿԸՀ-ն բաց է նաև օտարերկրյա ընտրական մարմիններին իրավական, ընտրական գործընթացների, հանրային իրազեկման և ընտրություններում տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու համար: ԿԸՀ-ն պատրաստակամ է ընդգրկվել միջազգային համաժողովներում, ֆորումներում՝ քաղաքականությունների մշակման և դրանց իրականացման լավագույն փորձի ուսումնասիրման և փոխանակման նպատակով: ԿԸՀ-ն բաց է օտարերկրյա ընտրական մարմինների, ոլորտային մասնագիտացված միջազգային կառույցների հետ համագործակցության հուշագրերի կնքման համար, ԿԸՀ-ն ձգտում է ընդլայնել միջազգային կապերը՝ նաև ոլորտի միջազգային կազմակերպություններին անդամակցելու եղանակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների հետ ակտիվ համագործակցության միջոցով: ԿԸՀ-ն անդամակցում է «Ընտրական մարմինների համաշխարհային ասոցիացիա»-ին (A-WEB), «Կանայք ընտրական վարչարարության

մարմիններում» միջազգային ասոցիացիային (WEM) և Ֆրանկոֆոնիայի ընտրական հմտությունների ցանցին (RECEF):

Կարողությունների զարգացում. ԿԸՀ-ն նախաձեռնում և մասնակցում է միջազգային վերապատրաստման ծրագրերի, սեմինարների և աշխատաժողովների, որոնք միտված են ՀՀ ընտրական մարմինների ներկայացուցիչների հմտությունների և գիտելիքների բարձրացմանը:

Ընտրությունների դիտորդական առաքելություններ. ԿԸՀ-ն կարևորում է ընտրություններում միջազգային դիտորդական առաքելությունների կազմում ընդգրկվելը, ինչպես նաև ՀՀ տարածքում անցկացվող ընտրություններին միջազգային դիտորդական առաքելություններին հրավիրելը: ԿԸՀ-ն շարունակում է ակտիվորեն ընդգրկվել այնպիսի միջազգային դիտորդական առաքելությունների կազմում, ինչպիսիք են՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԱՊՀ և այլ միջազգային կառույցների դիտորդական առաքելությունները:

ԿԸՀ-ն իր լիազորությունների շրջանակներում, ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ սերտ համագործակցությամբ, միջազգային գործընկերներին հրավիրում է ՀՀ տարածքում անցկացվող ընտրություններում ընտրական օրենսդրությամբ ամրագրված կարգավիճակով (միջազգային դիտորդ, այցելու) դիտորդական առաքելություն իրականացնել:

Պարբերաբար բոլոր համապետական ընտրությունների շրջափուլերում միջազգային հանրությունը հետաքրքրություն է ցուցաբերել ընտրական գործընթացների նկատմամբ: Միջազգային աջակցության շնորհիվ իրականացվել են թե՛ մասնագիտական վերապատրաստման (օրինակ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների ուսուցումը), և թե՛ տեխնիկական վերազինման (օրինակ՝ ընտրողների գրանցման սարքավորումների ձեռքբերումը) ծրագրեր:

Ընտրությունների կազմակերպման առաջին պատասխանատու և միջազգային աջակցության առաջնային շահառու հանդիսանալով հանդերձ, ԿԸՀ-ն հանդես չի գալիս դոնորներին լիածավալ համակարգողի դերում: Ավանդաբար այս աշխատանքը ստանձնել է որևէ այլ կառույց կամ պաշտոնյա:

Միջազգային աջակցության համակարգումը ԿԸՀ կողմից, հատկապես, ռազմավարական պլանը ընդունելուց հետո կարևոր է մի շարք հիմնավորումներով: Որպես ընտրական գործընթացների համար պատասխանատու անկախ պետական մարմին՝ ԿԸՀ-ն ճիշտ դիրքում է գտնվում միջազգային դոնորների միջոցներն ավելի արդյունավետ օգտագործելու համար՝ խուսափելով գործողությունների կրկնությունից: Ընտրություններին տրամադրվող աջակցությունը զերծ կլինի հատվածականությունից, որտեղ տարբեր դոնորներ հակված են օժանդակել ընտրական գործընթացների տարբեր բաղադրիչներ՝ առանց ընդհանուր և հետևողական ռազմավարության: Համակարգման բացակայությունը կարող է նաև դոնորների միջև «մրցակցության» պատճառ

դառնալ, իսկ նվիրատուները կարող են ավելի հետաքրքրված լինել աջակցության տեսանելիությամբ, քան ընտրական գործընթացի փաստացի կարիքներով: ԿԸՀ-ի կողմից միջազգային աջակցության համակարգումը նաև կնպաստի ընդհանուր թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը: ԿԸՀ-ի գործառույթներում համակարգման ներառումը հնարավորություն կտա առաջ մղել երկարաժամկետ ծրագրեր, քանի որ փորձը ցույց է տալիս, որ միջազգային դոնորների հետաքրքրությունն առավել տեսանելի է դառնում միայն անմիջականորեն ընտրություններին նախորդող ժամանակահատվածում:

Միջազգային աջակցությունը համակարգելու նպատակով ԿԸՀ-ն հետապնդում է հետևյալ ռազմավարական նպատակները՝

- ռազմավարական պլանի ամբողջական ներկայացում բոլոր միջազգային գործընկերներին և պարբերական համակարգման հանդիպումների և միջոցառումների իրականացում,
- առաջնահերթությունների քննարկումներ հետաքրքրված նվիրատուների հետ և օժանդակության ծրագրերի մշակում, իրականացում, վերահսկում:

6.3 Քաղաքացիական հասարակության ներգրավում

ԿԸՀ-ն առանձնապես կարևորում է քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների դերն ընտրական գործընթացներում: Ընտրությունների ոլորտում ավանդաբար ակտիվություն ցուցաբերած մի շարք հասարակական կազմակերպություններ առարկայական ներդրում են ունեցել ընտրական օրենսդրության մշակման, ընտրական ընթացակարգերի բարելավման, ընտրությունների դիտարկման և դիտորդների ԸՕ-ով սահմանված իրավունքների պաշտպանության հարցերում:

ՔՀԿ-ների շրջանում ԿԸՀ առաջնային գործընկերներ են եղել այն հասարակական կազմակերպությունները, որոնք անմիջականորեն իրականացրել են ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն, հրապարակել են զեկույցներ և ունեցել են համապատասխան գիտելիքներ ընտրական օրենսդրության բարելավման ոլորտում: Ըստ իրավիճակային անհրաժեշտության՝ ԿԸՀ-ն հանդիպումներ է ունեցել նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով, կանանց իրավահավասարության, ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

ԿԸՀ համագործակցությունը ՔՀԿ-ների հետ կրել է շարունակական, բայց ոչ միշտ կանոնակարգված կամ երկարաժամկետ պլանավորված բնույթ: Փոխգործակցությունը ՔՀԿ-ների հետ հատկապես ինտենսիվ է եղել նախընտրական շրջանում և ընտրական օրենսդրության վերանայման փուլերում: ԿԸՀ հանդիպումները ՔՀԿ-ների հետ տեղի են ունեցել կա՛մ երկկողմանի

խորհրդակցությունների, կա՛մ այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ բազմակողմանի քննարկումների ձևաչափով:

Գործընկերային հարաբերությունները ՔՀԿ-ների հետ կարևոր են ոչ միայն ընտրական բարեփոխումների և նորարարական ծրագրերի մշակման, այլ նաև այդ ծրագրերի իրականացման առումով: Առանց շահագրգիռ կողմերի ներգրավման տուժում է ոչ միայն նմանատիպ նախաձեռնությունների որակը, այլ նաև վտանգվում է դրանց իրականացման հաջողությունը:

ՔՀԿ-ները իրենց հերթին պետք է իրազեկ լինեն ԿԸՀ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակի, ինչպես նաև գործնականում տարբեր նախաձեռ-նությունների սահմանափակումների վերաբերյալ: Սխալ պատկերացումները ստեղծում են սխալ ակնկալիքներ և հիմք են դառնում չհիմնավորված գնահատականների համար:

ԿԸՀ-ն ռազմավարական պլանի իրականացման շրջանակում նախատեսում է խորացնել փոխգործակցությունը ՔՀԿ-ների հետ՝ իր առջև դնելով հետևյալ ռազմավարական խնդիրները՝

- պրոակտիվ կերպով զարգացնել համագործակցությունը ՔՀԿ-ների հետ՝ ընդլայնելով կազմակերպությունների և՛ աշխարհագրությունը, և՛ պրոֆիլային բազմազանությունը.
- համագործակցության հատուկ ձևաչափ ստեղծել մարդու իրավունքների, իրավապաշտպան, ժողովրդավարական ինստիտուտների զարգացման հարցերով զբաղվող ՔՀԿ-ների հետ՝ դիտարկելով տարաբնույթ նախաձեռնությունների մշակումը և/կամ համատեղ իրականացումը:

6. 4 Համագործակցություն ԶԼՄ-ների հետ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր հիմնական գործընկերների՝ ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ աշխատանքում որդեգրել է բաց և թափանցիկ գործելաոճ:

ԿԸՀ-ն կարևորում է ընտրությունների հրապարակայնությունն ապահովելու հարցում վերոնշյալ սուբյեկտների առանցքային դերը և իր քառամյա ռազմավարության նախագիծը մշակելիս քննարկումներ է ունեցել ԶԼՄ-ների և ընտրական գործընթացներով հետաքրքրված ՀԿ ներկայացուցիչների հետ:

Հանձնաժողովը գիտակցում է քաղաքացիների առջև իր հաշվետու լինելու առաքելությունը և այդ հաշվետվությունը հանրությանը ներկայացնելու հարցում առաջին տեղում դիտարկում է ԶԼՄ-ների հետ համագործակցությունը:

Ընտրությունների նախապատրաստման և անցկացման հրապարակայնության պահանջն ամրագրված է Ընտրական օրենսգրքում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության օրը՝ ժամը 9:00-ին, տեղեկություններ է հրապարակում ընտրութ-

յունների ընթացքի մասին, իսկ ժամը 12:00-ից սկսած՝ մինչև ժամը 21:00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ մարզերի, մարզկենտրոնների, 10 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների և Երևան քաղաքի, հրապարակում է տեղեկություններ՝ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք, ըստ ընտրական տեղամասերի, տեղադրվում են հանձնաժողովի համացանցային կայքում: Բացի այդ, ընտրությունների օրը ԿԸՀ մամուլի սրահում հրավիրվում են մամուլի ասուլիսներ, որոնց մասնակցում են ընտրական գործընթացի անխափանելիությունն ապահովող այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ ևս: Մամուլի ասուլիսները ԶԼՄ-ների համար հասանելի են ոչ միայն ուղիղ հեռարձակման տարբերակով, այլ նաև ԶԼՄ ներկայացուցիչները կարող են ներկա լինել ԿԸՀ մամուլի սրահում և իրենց հարցերը ևս հղել:

Հանրային հաշվետվողականության տեսանկյունից կարելի է դիտարկել քվեարկության արդյունքների աղյուսակավորումն՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների:

Այդ ամբողջ ընթացքը հասանելի է լայն հանրության համար: Հիմնականում համապետական ընտրությունների ժամանակ գրեթե բոլոր ԶԼՄ-ներն աղյուսակավորման միջոցով են հանրությանը համաժամանակյա տեղեկություն հաղորդում քվեարկության վերաբերյալ:

2023 թվականից սկսած ուղիղ եթերով հեռարձակվել են նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերը:

ԿԸՀ-ն առհասարակ իր բոլոր նիստերի, ընդունած որոշումների, տարբեր քննարկումների և հանդիպումների մասին հանրությանը տեղեկացնում է ոչ միայն պաշտոնական կայքէջով և սոցիալական ցանցով, այլ նաև մամուլի հաղորդագրությունների միջոցով, ինչն ավելի է մեծացնում տվյալ տեղեկատվության հասանելիությունն ու տարածումը հանրության շրջանում:

Ընտրական շրջափուլում անգնահատելի է ԿԸՀ պատրաստած տեսանյութերի տարածումը ԶԼՄ-ների, հատկապես, հանրային մուլտիպլեքսում գործունեություն ծավալող հեռուստաընկերությունների կողմից: Տարբեր ընտրությունների ժամանակ ԿԸՀ-ն գործընկեր կառույցների հետ պատրաստում է տեսանյութեր, որոնց միջոցով թե՛ մոտիվացնում է ընտրողների մասնակցությունն ընտրությանը, թե՛ բացատրում է ընտրակարգը: Որպես ԶԼՄ-ների հետ համագործակցության դրական փորձ կարելի է դիտարկել Երևանի ավագանու 2023 թվականի հերթական ընտրությունները, երբ մուլտիպլեքսում գործող գրեթե բոլոր հեռուստաընկերություններն առանց որևէ իրավական պարտավորության, իրենց եթերում պարբերաբար տեղադրել են ԿԸՀ տեսանյութերը:

ԿԸՀ էլեկտրոնային գործիքակազմերի ավելացումը նպաստում է ԶԼՄ-ների հետ համագործակցության և հանրային հաշվետվողականության մակարդակի բարձրացմասնը: ԿԸՀ կայքում տեղադրվում են ընտրություններին մասնակից քաղաքական կուսակցությունների, նաև թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերը, ինչը ԶԼՄ-ների համար տվյալների լրացուցիչ բազա է:

ԿԸՀ կայքում հասանելի են ոչ միայն ընթացիկ լուրերը, այլ նաև ԿԸՀ աշխատակիցների գործուղումների մասին տեղեկատվությունը, այն որպես հաշվետվություն տրամադրվում է նաև ԶԼՄ-ներին:

ԿԸՀ ներկայացուցիչները պարբերաբար հանդես են գալիս մամուլի ասուլիսներով, հարցազրույցներով, և առհասարակ ԶԼՄ-ների հետ համագործակցում են վերջիններիս անփոխարինելի դերի գիտակցմամբ:

Հանրային հաշվետվողականության ձևերից է նաև քաղաքացիների՝ սոցիալական ցանցով ԿԸՀ-ին հղած հարցերին պատասխանելը:

ԿԸՀ-ն կարևորում է ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ԶԼՄ-ների դերը և վերջիններիս հետ համագործակցությունը: ԿԸՀ-ի և ԶԼՄ-ների միջև կապն ապահովում է ԿԸՀ մամուլի քարտուղարը: